

ՀԱՅ ԲԱՐԲԱՌՍԵՐԻ ԾԱԳՄԱՆ ՀԱՐՑԻ ՇՈՒՐՋԸ

Ա. Ս. ՂԱՐԻՔՅԱՆ

Հեղվաբանության շատ կարևոր բնագավառ է պատմական բարբառագիտությունը: Զբաղվելով բարբառների առաջացման, զարգացման, փոփոխությունների, ընդհանուր լեզվի հետ ունեցած փոխհարաբերությունների հարցերով՝ պատմական բարբառագիտությունը նախապայմաններ է ստեղծում լուծելու ոչ միայն լեզվի պատմության կոնկրետ հարցեր, այլև ընդհանուր լեզվաբանության տեսական խնդիրներ: Նախասովետական շրջանում պատմական բարբառագիտություն չենք ունեցել: Միայն սովետական շրջանում են բարձրացվել այդ գիտության մի շարք հարցեր, սակայն ինքը գիտությունը դեռ հարկավոր ձևավորում չի ստացել, ուստի պատմական բարբառագիտության շուրջն արտահայտված բոլոր տեսակի կարծիքներն ու վեճերը կարող են նպաստել այդ գիտության զարգացմանը: Պատմական բարբառագիտության կարևոր սլոթերներին է բարբառների ծագման հարցը: Իբրև ընդհանուր տեսություն լեզվասանությունը մշակել է այն կարծիքը, թե բարբառները առաջանում են ընդհանուր լեզվի մահացման հետևանքով, որն իր հերթին տեղի է ունենում տվյալ լեզվով խոսող կոլեկտիվի քայքայման հետևանքով: Բաժանվելով հատվածների՝ կոլեկտիվը դադարում է գոյություն ունենալուց, դադարում են ներքին կապերը, դադարում է գոյություն ունենալուց նաև նրա լեզուն, իսկ բաժանված հատվածներից յուրաքանչյուրը, հեռանալով մյուսներից, յուրովի փոփոխում է երբևէ ընդհանուր լեզուն և առաջացնում բարբառ:

Ըստ այդ տեսության, լինում են նաև դեպքեր, երբ ամբողջ ժողովուրդը, խոսելով մի լեզվով, ենթարկվում է պետական կատաստրոֆայի, կորցնում է իր ընդհանուր լեզուն, և պատմական նոր իրադրության պայմաններում սկիզբ է առնում մի շարք բարբառների:

Իրականում բարբառների առաջացման պրոցեսը շատ ավելի բարդ է և բազմապիսի:

Կոնկրետորեն առնված՝ հայ բարբառների առաջացման գիտական տեսությունը առաջին անգամ մշակվել է մեծանուն հայագետ Հ. Աճառյանի կողմից: Հ. Աճառյանի կարծիքով հայ ժողովուրդը հնդեվրոպական նախամայր ցեղից անջատվելուց հետո (երրորդ հազարամյակում մեր դարաշրջանից առաջ) խոսել է մի միասնական լեզվով, հնդեվրոպական լեզվի մի բարբառով: Այդ վիճակը տևել է մինչև առաջին հազարամյակի վերջը, մեր դարաշրջանից հետո, և միայն տասնմեկերորդ դարից սկսած հայերեն ընդհանուր լեզուն բաժանվել է բարբառների: «Երբ սկսեց հայերի մեծ արտագաղթը դեպի գանազուն կողմեր, խառնապես դեպի հյուսիս և դեպի արևմուտք, հազորդակցության կապը ներքին և արտաքին հայության միջև կտրվեց: Ավելացնենք սրա վրա հայ պետական կյանքի ջնջումը, մի քաղաքական կենտրոնի բացակայությունը, տարբեր

տիպի օտար ազդեցություններ զանազան երկրների հայ զաղութներում և վերջապես կրթության պակասը,— ահա այն պատճառները, որոնք առաջ բերին փոքրամիջ հայ ժողովրդի մեջ համեմատաբար մեծաթիվ բարբառներ»¹։ Ասել է թե՛ հայ ժողովուրդը մի անրաժան լեզվով է խոսել 3500 տարվա ընթացքում, չունենալով ոչ մի բարբառ, և միայն վերջին հաղարամյակի սկզբին առաջացրել է բարբառներ։ Իհարկե, այդ բարբառները չեն առաջացել հանկարծակի, այլ աստիճանաբար։ Բարբառային որոշ սաղմեր, ըստ Հ. Աճառյանի, երևում են V դարի դարբարի մեջ, բայց դրանք այնքան աննշան են, որ արժեք չեն ներկայացնում և նույնիսկ ենթաբարբառ չեն կազմում։ Այսպես է Հ. Աճառյանի տեսակետը, որ պրոֆ. էդ. Աղայանը փորձում է նրա մեջ զանազան ուղղումներ մտցնելով դարձնել ընդունելի։ Թեև իսքը՝ պնդում է. «Չկա լեզու, որ բարբառ չունենա», սակայն ոչ մի խոսք չի ասում այն մասին, թե ինչպես է, որ ըստ Հ. Աճառյանի, հայերեն լեզուն 3500 տարվա ընթացքում ոչ մի բարբառ չի սնեցել։ Առաջնորդվելով այն ճշմարտությամբ, թե «չկա լեզու, որ բարբառ չունենա», և հիմնվելով մեր հավաքած բազմաթիվ փաստերի վրա, մենք արտահայտել ենք այն կարծիքը, որ հայ միասնական ցեղի քայքայումից հետո, հայերեն լեզվի մեջ գոյություն ունեցող բարբառային սաղմերը ակտիվացել են և վերածվել բարբառային որոշակի տարրերի դեռ հնագույն ժամանակներից և այն էլ, ինչպես ցույց են տալիս մեր փաստերը, մեր դարաշրջանից առաջ երկրորդ հաղարամյակի վերջերից։ Մեր կարծիքով, մեր դարաշրջանից առաջ, առաջին հաղարամյակի սկզբում կազմվել են մեր հիմնական բարբառները, որոնք հետագայում ավելի ու ավելի տարբերվել են միմյանցից, ճյուղավորվել են, միմյանց համադրվել առանձին մասերով, հիմնական մասով միմյանցից ավելի հեռացել, հաճախ որոշ հատվածներով իրար միացել և այս ձևով շարունակել իրենց գոյությունը մինչև նոր ժամանակները։ Հայկական ֆեոդալիզմի ստեղծման և զարգացման զուգընթաց հին բարբառները զգալի փոփոխություններ են կրել, նրանք իրենց ներսում բաժանվել են նոր բարբառների՝ առաջացնելով բարբառային ճյուղեր։ Դրա հետևանքով է, որ այժմ մենք հայտնաբերում ենք շուրջ վաթսուն բարբառներ։

Ինչպես տեսնում ենք, բարբառների առաջացման մասին մեր տեսակետը միանգամայն տարբեր է մեծ հայագետ Հ. Աճառյանի տեսակետից։

Պրոֆ. էդ. Աղայանը ընտրում է միջին ճանապարհը, այս երկու տեսակետները հաշտեցնելու ճանապարհը։ Նա գտնում է, որ հնագույն շրջանում առաջացել են հայերենի հին բարբառները, որոնք մահացել են մինչև մեր թվականության հինգերորդ դարը, ապա հինգերորդ դարից սկսած կազմվել են հայերենի նոր բարբառներ. «IV—V դարերը մոտավոր սահմանագիծն են հսկողիսանում հին հայերեն բարբառների մահացման և նոր բարբառների սաղմնավորման»² (ընդգծումը հեղինակինն է—Ա. Դ.)։

Բայց ե՞րբ և ի՞նչ պատճառով հին բարբառները մահացան և նորերն առաջացան։ Այդ հարցին պատասխանում է հետևյալ կերպ. «Ուժեղ, կենտրոնական պետության ստեղծումը, հայ ժողովրդի տարբեր հատվածների միասնացումը մեկ կենտրոնացած պետականության մեջ հատկապես Տիգրանի ժամանակ»։

¹ Հ. Աճառյան, Հայոց լեզվի պատմություն, II մաս, 1951, էջ 324։

² էդ. Աղայան, Նոր հայերեն բարբառների առաջացման հարցի մասին, «Պատմա-բանասիրական հանդես», № 2, էջ 227։

անհրաժեշտորեն նպաստում էր հին հայերեն բարբառների մահացմանը, որ համաժողովրդական հայերենի կազմավորման անխուսափելի պայմաններից մեկն էր: Դրան հակառակ, շորժուղ դարից հետո հայ ժողովուրդը ոչ միայն կորցնում է իր անկախ միասնական պետականությունը, ենթարկվում պարսե-
ական արշավանքների, այլև բաժան-բաժան է լինում, նրա հատվածները մե-
կուսացվում են միմյանցից, որով և անհրաժեշտ պայման է ստեղծվում բա-
րբառների առաջացման համար»¹ (ընդգծումը մերն է—Ա. Ղ.):

Բայց ո՞վ կարող է հավատալ, որ II դարում ստեղծված հայ պետակա-
նությունը Հայաստանում այնպիսի մի կենտրոնացված պետականություն էր,
որ պայմաններ ստեղծեց հայ հին բարբառների վերանայուն:

Եթե Վաշվի առնենք հին դարերի պետական կապերի ներքին թուլությունը,
հաղորդակցության ճանապարհների անկատարությունը, տնտեսական կյանքի
անջատվածությունը և փոխադարձ շատ թույլ կապերը, տեղական իշխանու-
թյունների կիսաանկախ և անկախ դրությունը, ապա դատողությունը կթելադրի
մեզ հավատալու նման պնդումների: Այս հասկանալու համար պետք է հիշել
եվրոպական իսկական կենտրոնացված պետությունների պատմությունը, օրի-
նակ, հենց Ֆրանսիայի, Անգլիայի: Հիշենք Ֆրանսիական աբսոլյուտիզմը և
ապա Ֆրանսիական կենտրոնացված բուրժուական պետությունը, որի կենտրո-
նացվածության հետ ոչ մի համեմատություն չի կարող ունենալ հայկական
Արտաշեսյան պետականությունը: Ավելի քան երեք-չորս հարյուր տարվա
կենտրոնացված պետականությունը չի վերացրել ֆրանսիական բարբառները,
ավելին՝ հյուսիսային և հարավային ֆրանսիացիները բարբառով խոսելիս
աժժ էլ միմյանց չեն հասկանում:

Չորս հարյուր տարվա խիստ կենտրոնացված պետականություն ունեցող
Անգլիայում շարունակում են դեռ պահպանվել բարբառները:

Բաժան-բաժան նախարարական Հայաստանը, որի կենտրոնական իշխա-
նության ազդեցությունը հազիվ թե փոքրիկ ժամանակամեջոցում տարածվում
էր ամբողջ երկրի վրա, կարո՞ղ էր բարբառները վերացնել և ամբողջ ժողովրդի
համար կազմել մի միաձուլ լեզու: Այլ հարց է, որ բարբառների կողքին իրեն
միջբարբառային հարաբերությունների միջոց գոյություն է ունենում ընդհա-
նուր լեզու, որը կարող է լինել նաև որևէ խմբի կամ վայրի լեզվական տարբե-
րակը կամ բարբառը: Այս տեսությունը, մեր կարծիքով, կտրված է ռեալ հողից,
փաստերից և լեզվի պատմությունից:

Բարբառների վերանալու նախապայմաններ անցյալում ոչ մի երկրում չեն
եղել: Կարելի է անվերապահորեն ասել, որ նախաֆեոդալական շրջաններում
գոյացած բարբառները ոչ մի լեզվում որևէ ժամանակ չեն վերացել, որովհետև
հաջորդող ֆեոդալիզմը նոր, պարարտ հող է ստեղծել բարբառների զարգաց-
ման և մանրացման համար, նոր ճյուղավորումների համար և այլն: Դա պատ-
մական անկասելի պրոցես է, և պատմական մատերիալիզմի ուսմունքին քիչ
թե շատ ծանոթ անձը չի կարող հակառակ պնդել:

Այլ հարց է, որ այդ բարբառները անպարման վերափոխության են ևն-
թարկվում, ճյուղավորվում են, նոր տարբերակներ են տալիս և կարող են նման
չլինել իրենց նախորդներին:

¹ Է. Գ. Աղայան, Նշվ. աշխ., էջ 228-229:

Բարբառների վերացման պրոցեսը տեղի չի ունենում նույնիսկ բուրժուական հասարակարգում, որտեղ լինում է սովորաբար ոչ միայն կենտրոնացած պետականություն, այլև հասարակության մեջ գոյություն ունեցող տեղական առանձնահատկությունների, խավային տարբերությունների վերացում, դասակարգային կազմավորումների բեկնացում, երբ բարբառների հենարանը՝ գյուղացիությունն ու քաղաքի մանր բուրժուական բնակչությունը քայքայման են ենթարկվում՝ սովարացնելով մի կողմից բանվոր դասակարգի քանակը, մյուս կողմից՝ բուրժուական դասակարգը:

Բարբառների վերացումը հետադարձ է միայն սոցիալիստական հասարակարգի բարձր զարգացման պայմաններում, երբ ուեղի է ունենում կուլտուրական ռեվոլյուցիա, վերանում են դասակարգային հակասությունները, փոխվում է հասարակության ներքին կառուցվածքը, ժողովուրդը համաստարած կերպով դառնում է պարտադիր միջնակարգ կշիռություն ստացած: Ընդհանուր ազգային լեզուն չի մնում միայն մի խավի սեփականություն, ինչպես բուրժուական հասարակարգում, այլ դառնում է համաժողովրդական, խոսակցական լեզու: Այստեղ բարբառները բնականորեն մահանում են:

Մինչ այդ՝ և՛ ֆեոդալիզմի ժամանակ, և՛ նույնիսկ կապիտալիզմի ժամանակաշրջանում շարունակում են գոյանալ նոր ու նոր բարբառներ և ենթաբարբառներ, կազմվում են միջբարբառներ, երկու բարբառների սահմանում կազմվում են խառնուրդ բարբառներ, մի խոսքով լեզվական տարբերակումները շարունակվում են:

Այսպես է բնական պրոցեսը:

Այժմ գանք փաստերի քննարկմանը:

Որ հայ բարբառները առաջացել են շատ վաղ ժամանակներում, այդ մասին ճիշտ կռահել է մեր XI դարի հեղինակը՝ Նոս տոսում է.

«Եւ եղև թիւրութիւն խաւացին այսպէս. դնչուք եւ թոթովատք եղեալ յազգէն, որ յառաջ քան զմեզ, որք ոչ կարէին ղընտրութիւն առնել լծորդացն ի խաւս իւրեանց յազազս մերձաւորութեան լծորդացն առ միմեանս, որպէս բեն մենի, պէի եւ փիւրի եւ որք մի քստ միտջէքն¹. ավանգեցաւ թիւրութիւն խաւացնոցա որդոց իւրեանց որպէս զուղղութիւն յազազս միայն բնակելոյն եւ ոչ ումեք ղոլոյ մերձաւոր առ նոսա: եւ էին նոքա Վահագետք իւրաքանչիւր գաւառաց յորժամ էին տակաւին նուազութիւն մարդկան: Իսկ սովորութիւն վարժեալ պահեցաւ իրբւ եւարէնս յիւրաքանչիւր գաւառի եւ եղեալ անուանակոչութիւն անմարմնոց եւ մարմնոց, աճականացն եւ անաճից»²:

[«Բարբառների թյուրությունը (ծոռմը, աղավաղումը) եղավ այսպես. թյուփառներ և թոթովախոսներ կային մեզնից առաջ (Հայաստանում—Ա. Ղ.) եղած ազգից (ցեղերից), որոնք իրենց խոսքի մեջ չէին կարողանում լծորդների տարբերություն դնել լծորդների միմյանց մերձավոր լինելու պատճառով, ինչպես բեն՝ (բ) մենին (մ. օրինակ՝ բակ-մակ — Ա. Ղ.), պէին (պ. օրինակ, բան-պան — Ա. Ղ.) և փյուրին (փ. օրինակ՝ բան-փան — Ա. Ղ.), այդպես նաև այն հնչյունների վերաբերյալ, որոնք միմյանց հետևից էին (այսինքն՝ գ, կ, ք, դ, ա, թ — Ա. Ղ.): Նրանց խոսքն ավանդվեց նրանց որդիներին որպես ճշտու-

¹ Այսինքն՝ «դրանց նման իրաք հաջորդողները» գ, կ, ք, դ, ա, թ և այլն:

² Н. Адоку, Дионисий Фракийский и армянские толкователи, էջ 224. մեջբերումն առաջին անգամ բերված է մեր «Հայ բարբառագիտություն» գրքում:

կյուն այն պատճառով, որ նրանք մենակ էին բնակվում և նրանց մոտ մարդ չկար (այսինքն՝ հայ չկար — Ա. Ղ.)։ Եվ դրանք յուրաքանչյուրը մի գավառի նահապետներ էին, երբ դեռ մարդկանց բնությունը կար (այսինքն՝ տոհմական կարգերի ժամանակ, երբ մարդկային հասարակությունները փոքրաթիվ էին — Ա. Ղ.)։ Իսկ այս սովորությունը վարժություն դարձավ և պահվեց որպես յուրաքանչյուր գավառի օրենք (կանոն — Ա. Ղ.) և եղավ (այդպես) անվանագրություն անմարմինների և մարմնավորների, աճականների»։

Ինչպես աեսնում ենք, այս հեղինակը պնդում է, որ հայ բարրառները առաջացել են հայ ժողովրդի կազմավորման ժամանակ և, ճիշտ կերպով բացատրելով, ասում է, թե բարրառները առաջացել են, երբ օտարները սովորել են հայերեն լեզուն։ Այս հանգամանքը պետք է տշքաթող չանել, որովհետև ներքին փոփոխությունների պրոցեսը շատ ավելի երկարատև պրոցես է բարրառների գոյացման համար, քան երբ օտարները սովորում են մի նոր լեզու։ Մի օրինակ այդ հարցը կպարզարանի։

350 տարի առաջ Սահ Աբրահիմ ձեռքով Արարատյան դաշտից Պարսկաստանի խորքերն են գաղթեցված եղել տասնյակ հազարավոր հայեր։ Նրբ 1948 թվականին դրանցից մի քան հազար հայեր վերադարձան Հայաստան, պարզվեց, որ նրանք խոսում են մաքուր, օրինակելի արարատյան բարբառով։ Նրանց բարբառի և Հոկտեմբերյանի շրջանի մեր բնակիչների բարբառի միջև տարբերությունն այն է, որ նրանք խոսում էին ավելի հին տիպի, մաքուր արարատյան բարբառով, իսկ մերոնք աննկատ կերպով փոփոխել են իրենց բարբառը։ 350 տարի, համարյա նույնքան ժամանակամիջոց, որի ընթացքում, ըստ պրոֆ. էդ. Աղաջանի, պիտի վերանային բարբառները, — և արարատյան բարբառը որևէ փոփոխություն չի կրել, բացի մի քանի տասնյակ պարսկերեն բառեր յուրացնելուց։ Այդպիսի օրինակներ մեր ժողովրդի լեզվական կյանքում շատ կգտնենք։ Հիշենք Զուլալի, Աստրախանի, Նոր-Նախիջևանի, Առտիալի և մյուս բոլոր բարբառները։ Այսպես դանդաղ են կատարվում ներքին փոփոխություններ։

Մեր պնդումն այն է, որ բարբառների հնչյունական սխառմը իր գոյությունը պահպանել է հնդեվրոպական վիճակից սկսած։ Այդ նպատակով մենք մեր հոգիվածում և զբքում բերել ենք հնդեվրոպական բառեր և հայերենի մեջ ցույց ենք տվել շնչեղ ձայնեղների պահպանումը։ Հետո մենք, դրանք համեմատելով հնդեվրոպական վիճակի հետ, պարզել ենք, որ գիտության մեջ ընդունված տեսակետը, թե հայերեն լեզուն իր պայթական բաղաձայնական համակարգում ունեցել է բոլոր շարքերի մի լրիվ տեղաշարժ, ճիշտ է միայն դրարարի և «Ս» ճյուղի բարբառների մեծ մասի նկատմամբ։ Մենք ցույց ենք տվել, որ մեր մյուս բարբառավորները նույնպես կատարել են առաջին տեղաշարժը, սակայն ոչ բոլոր բաղաձայնական կարգերի նկատմամբ։ Այս պատճառով էլ բարբառներում ստեղծվել են բաղաձայնական տարբեր համակարգեր։ Մեր հետազոտությունը ցույց է տվել, որ բոլոր բարբառները միասնաբար տեղաշարժել են հնդեվրոպական խուլերը շնչեղ խուլերի շարքը, իսկ մյուս շարքերի նկատմամբ տեղաշարժը կատարվել է այլևայլ կերպով։ Այսպես՝ շուրջ տասներկու բարբառներ պահպանել են հնդեվրոպական շնչեղ ձայնեղները (bh, dh, gh), շուրջ քսանյոթ բարբառներ պահպանել են անփոփոխ հնդեվրոպական ձայնեղները և, վերջապես, շուրջ տասնհինգ բարբառներ հնդեվրոպական շնչեղ բաղաձայնները վերածել են խուլերի կամ շնչեղ խուլերի, իսկ տասը բարբառներ էլ ձայնեղները վերածել են խուլերի։

Այս ալլադանությունից երևում է, որ հայերեն բարբառներից տասներկուսը պահպանել են հնդեվրոպական բաղաձայնական համակարգը համարյա անվթար վիճակում, մինչդեռ գրաբարը տեղաշարժել է նշանակում է, նրանք ներկայացնում են բաղաձայնական համակարգի ավելի հին վիճակ, քան գրաբարի վիճակն է։ Հետևարար նրանք գրաբար վիճակից ավելի հին պատկեր են ներկայացնում։ Ի դեպ, ասենք, որ մենք գրաբար վիճակ ասելով հասկանում ենք հայերենի բնականական և անչլունական այն վիճակը, որ նա ունեցել է II դարից (մեր դարաշրջանից առաջ) մինչև VI—VII դարերը մեր դարաշրջանից հետո։ Այսպիսով՝ այդ բարբառները, հնչյունական կազմով՝ գրաբարից ավելի հին լինելով, վիպում են, որ բարբառների հնչյունական տարբերակումները տեղի են ունեցել վաղ ժամանակներում, գրաբարի որակի ձևավորումից շատ առաջ։ Պրոֆ. Էդ. Աղայանը փորձում է հերքել այդ տեսակետը։ Ընդունելով, որ մեր դասակարգումը և պարզաբանումը ճիշտ է, նա դրոշմում է, թե բարբառների բաղաձայնական համակարգի այս վիճակը, որ եղել է նախքան գրաբարը, հետո վերացել է՝ միաձուլվելով գրաբարի մեջ, իսկ հետո, երբ գրաբարը բաժանվել է բարբառների, բարբառները նորից վերականգնել են նախկին վիճակը, այսինքն՝ տեղի է ունեցել մի տեսակ հնչյունական ատավիզմ։ Սովորաբար ընդունված է ատավիզմը համարել ալլոսերման երևույթ։ Իհարկե, այդպիսի ատավիզմ լեզվի մեջ չի լինում, և հայերենի մեջ էլ չի եղել։

Զբաղվենք այն հարցով, թե ինչպես է նա փորձում հաստատել այդ նա հետևյալ միտքն է հայտնում. եթե շնչեղ ձայնեղ ունեցող հնդեվրոպական բառերում բարբառները պահպանել են հնդեվրոպական վիճակը, ապա ոչ հնդեվրոպական ծագում ունեցող բառերում նրանք չպետք է ձայնեղները վերածելին շնչեղ ձայնեղների և խուլերը՝ ձայնեղների. «...ոչ հնդեվրոպական ծագումով, հատկապես իրանական և հնդարյայի արարական, թուրքական և այլ փոխառությունների մեջ եղած գրաբարյան բ, դ, փ, և պ, կ, տ հնչյունների դիմաց հիշյալ բարբառները պետք է ունենային նույն բ, դ, փ և պ, տ, կ հնչյունները։

Այլ կերպ ասած, գրաբարյան ձայնեղ և խուլ պայթականների դիմաց հիշյալ բարբառները պետք է ունենային մերթ շնչեղ ձայնեղներ, մերթ էլ պարզ ձայնեղներ և խուլեր։ Այսպիսի համապատասխանությունը միանգամայն օրինական կլիներ հենց այն պատճառով, որ այդ բարբառները շնչեղ ձայնեղներն ու պարզ ձայնեղներն ունեցել են հենց սկզբից¹։ Իրանի շնչեղ ձայնեղներ կապահովանին միայն հնդեվրոպական բառերում և քանի որ այդպես չեն արել, ընկ. Աղայանի կարծիքով, դա ապացույց է, որ այդ շնչեղ ձայնեղները այդ բարբառներում պարսկերենի, ասորերենի և արաբական փոխառությունների ժամանակ չեն եղել։

Մենք հակառակն ենք կարծում։ Սեր կարծիքով մեր բարբառներն այդ փոխառությունների ժամանակ ունեցել են արատասանական որոշ համակարգ, և ամեն մի բառ, որն ընկել է այդ բարբառների լեզվական ոլորտը, ենթարկվել է նրանու արատասանության օրենքներին։

Այսպես՝ Մշո, Կարնո, արարատյան, Ջուղայի, Ումի, Դիադինի բարբառները բառակերպ չեն ունեցել պայթական պարզ ձայնեղ հնչյուն, այլ միայն շնչեղ ձայնեղ. հետևաբար, ձայնեղով սկսվող բոլոր բառերի, այդ թվում նաև

¹ Էդ. Աղայան, նշվ. աշխ., էջ 214։

փոխառյալ բառերի, առաջին ձայնեղ հնչյունը պիտի արտասանեն շնչեղ ձայնեղով, ինչպես որ այժմ էլ կատարում են: Հետևաբար պետք է սուղացվեն *bazuk* (պահլ.) > Կարին՝ բ'ազուզ, Երևան, Ալաշկերա բ'ազուզ > ն. Զուզտ՝ բ'ազուք...¹:

Իսկ Արարիկի, Շապին-Գարահիսարի, Ակնա, Սուչավայի, Սերասուխայի և Խարբերդ-Երզնկայի բարբառները խուլ հնչյուններ չեն ունեցել, այլ ունեցել են շնչեղ ձայնեղ և ձայնեղ հնչյուններ: Եվ պարզ է, եթե վերցնում են բառը ձայնեղով, պիտի արտասանեն շնչեղ ձայնեղ, եթե վերցնում են խուլով, պիտի արտասանեն ձայնեղով, որովհետև ձայնեղի և խուլի մեջ եղած տարբերությունը պետք է արտահայտեն իրենց արտասանական բաղադրի հնարավորություններով:

Մեր բարբառների արտասանական բազան, ինչպես վկայում է նաև ինքը պրոֆ. Էդ. Աղայանը, ավելի հետևողական և ուժեղ է եղել այն բառերի նկատմամբ, որոնք փոխ են առնվել մինչև X դարը: Նշանակում է՝ բարբառների հիմնական օրինաչափությունները ամուր և կայուն են եղել մինչև X դարը: X դարից հետո տրոշ բարբառների մեջ նկատվում է այդ օրինաչափությունների թուլացում, բայց դա չի կարող երևալ և դա չի երևում այն բարբառների մեջ, որոնցից օրինակ է բերում պրոֆ. Էդ. Աղայանը: Նրա պնդումը, թե Երևանի բարբառը X—XI դարերից սկսած իր արտասանական օրենքների մեջ շեղումներ է մտցնում, չի համապատասխանում իրականության: Արարատյան բարբառի զանազան հատվածներում այժմ նկատվում են հնչյունական տարբեր օրինաչափություններ: Այսպես՝ Քանաքեռի խոսվածքում բառասկզբի բաղաձայնական համակարգը երկաստիճան խլազուրկ է, էջմիածնի խոսվածքում՝ համարյա եռաստիճան է, իսկ Աշտարակը, Փարպին, Լոռին հավատարիմ են Երևանի բարբառի հիմնական հատկանիշներին: Այդպես է առավել ևս Բայազետի ենթաբարբառը, որի արտասանության մեջ քառաստիճան համակարգը խիստ ցայտուն է:

Այսպիսով՝ զգույշ պետք է լինել ընդհանուր հայտարարություններ անելու: Նույն ուսմերեն փոխառությունները, կամ եվրոպական մի այլ լեզվից առնված փոխառությունները, այժմ պրոֆ. Էդ. Աղայանի հիշատակած բարբառներում պահպանում են իրենց օրինաչափությունն այնպես, ինչպես որ նա վկայում է Կարնո բարբառի մասին, որովհետև ի վիճակի է վկայակոչելու Հ. Մկրտչյանի աշխատությունը: Նույնը կաներ նա մյուս բոլոր բարբառների նկատմամբ, եթե իր ձեռքի տակ ունենար ժամանակակից գիտական պահանջներով կատարված հնչյունաբանական ուսումնասիրություններ:

Բայց եթե համաձայնենք պրոֆ. Էդ. Աղայանի այն կարծիքին, թե արարատյան բարբառը, կամ մեր մյուս բարբառները իրենց բաղաձայնական համա-

¹ Ձերկարացնելու համար չենք կրկնում և օրինակների համար հղում ենք Էդ. Աղայանի հոդվածին (տե՛ս նույն տեղում):

Ի դեպ նկատենք, որ Էդ. Աղայանի օրինակների մեջ բառասկզբի հնչեղ ձայնեղների օրինակներն առնված են նաև Զեյթունի, Հաճրնի և Սալմաստի բարբառներից, որոնք իրենց հնչյունական համակարգում այդպիսի հնչյուններ չունեն: Զեյթունի և Հաճրնի բարբառները պատկանում են եռաստիճան անդալարժ-տեղափոխության խմբին, իսկ Սալմաստի բարբառը՝ երկաստիճան ձայնեղազուրկ խմբին, վերջինս թեև զոմեջ բառը արտասանում է *թ'ամէշ*, բայց ոչ՝ *դ'ամէշ*: Թյուրիմացությունների աղբյուրը մեծանուն բարբառագիտ Հ. Աճառյանի տառադարձությունների վրիպակներն են, որոնցից անվերապահորեն օգտվում է Էդ. Աղայանը:

կարողը սկսում են խախտել X—XI դարերից, ապա դա կլինի ջախջախիչ արդումենտացիա իր այն պնդումի դեմ, որ X դարից հետո իբր կազմվել են հայերենի նոր բարբառները: Ինչպե՞ս կարող էին բարբառներ առաջանալ այն ժամանակ, երբ բարբառային հատկություններն սկսում էին տեղի տալ: Եթե այդ ճիշտ է, ապա դա կարող է հաստատել միայն մի միտք, մի ճշմարտություն, որ բարբառները իրենց բաղաձայնական համակարգով կայուն ու հաստատուն են եղել մինչև X դարը: Ուրեմն նրանք եղել են մինչև X դարը, որից հետո սկսվել է նրանց, իբրև բարբառների, քայքայման, վերանալու դանդաղ պրոցեսը: Այդ բանը ավելի ցայտուն կերպով երևում է մի այլ բարբառախմբի մեջ: Այդ բարբառախմբի մեջ մտնում են առաջին տեղաշարժի ենթարկված երկաստիճան ձայնեղադուրկ համակարգ ունեցող բարբառները (Պարբաղ, Շամախի, Աստրախան, Շաղախ, Հադրութ, Վան, Ուրմիա, Մարաղա, Խոյ): Այդ բարբառները հնդեվրոպական լեզվից ժառանգած բառերում բոլոր շնչեղ բաղաձայնները և ձայնեղները բառասկզբին վերածվում են խուլերի: Օրինակ՝

- Հնդեվր. bher- > Ղրբ. պիրիլ, Վան՝ պիրիլ, Ուրմիա՝ պէրէլ և այլն:
 » ghomo- > Ղրբ. կ'ում, Շամախի՝ կ'ում, Գորիս՝ կ'ում և այլն:
 » dhur- > Ղրբ. տոնը, Վան՝ տուռ, Ուրմիա՝ տուռ և այլն:

Հետևաբար հնդեվրոպական համակարգի նկատմամբ դրանք կատարում են շնչեղ ձայնեղների երկու տեղաշարժ և ձայնեղների մեկ տեղաշարժ, որից և ստեղծվում է հետևյալ պատկերը.

Հնդեվր. նախալեզվ. bh b p ph dh d t th gh g k kh
 Հայ. 7 բարբառախումբը. — — p ph — — t th — — k kh

Գրաբարի համեմատությամբ այս բարբառախումբը կատարում է մեկ տեղաշարժ, որը և մեր առաջին դասակարգման մեջ մենք անվանել ենք առաջին տեղաշարժ:

Գրաբար՝ բ պ փ դ տ թ գ կ թ
 Բարբառային՝ — պ փ — տ թ — կ թ

Այս տեղաշարժին ենթարկվում են, շնչին բացառությամբ, բուն հայկական և անհայտ ծագումով բոլոր արմատները:

Երբ քննում ենք փոխառություններն ալս բարբառներում, նկատում ենք, որ դրանք մի մասը ենթարկվում է առաջին տեղաշարժին, օրինակ.

պնլ. bazūk > Վան՝ պոսուկ > Ուրմիա՝ պոզուք > Խոյ՝ պոզուք և այլն.
 պնլ. bazık > Վան՝ պոսուք > Ուրմիա՝ պոսուք > Մարաղա՝ պոսուք և այլն.
 պնլ. barak > Վան՝ պարակ Ուրմիա՝ պարակ > Ղրբ. պէրակ և այլն.
 պոս. gərazman > Վան՝ կէրէզման > Շամախի՝ կէրէզման > Ղրբ. կրէզման և այլն.

պնլ. daşı > Վան՝ տաշտ > Ուրմիա՝ տաշտ > Ղրբ. տաշտ և այլն.
 պնլ. dumak > Վան՝ տըմակ > Ուրմիա՝ տըմակ > Ղրբ. տըմակ և այլն:

Այսպես նաև՝ բժիշկ, բոբոս, բրինձ, զավագան, գույն, գովել և այլն: Փոխառյալ բառերի մի մասն էլ այդ տեղաշարժին չեն ենթարկվում.

օրինակ՝

պհլ. bachf > Վան՝ բախա > Ուրմիա՝ բախտ > Մարաղա՝ բախտ և ալլն.

պհլ. biz > Ուրմիա՝ բ'ւժ, Վան՝ բժոսա.

պրս. geġ, giġ > Վան՝ գ'էժ > Ղրբ. գ'իժ > Ուրմիա՝ գ'էժ և ալլն.

պհլ. zavmes > Վան՝ գ'օմէշ > Շամ օխի՝ գ'սմաշ > Ուրմիա՝ գ'ամէշ և ալլն:

Այսպես նաև դամ, դարդ, պեն, ջուխտ՝ և ալլն:

Քննելով նրանց ժամանակակից վիճակը, պարզում ենք, որ այդ բարբառները սովորաբար նոր փոխառությունների մեջ տեղաշարժ չեն կատարում, այսինքն՝ կորցրել են իրենց բարբառային հասկանիշը. օրինակ՝ ռուս. бригад, батрак > Ուրմ. բրիգադ, բատրակ. ռուս. директор > Ուրմ. դըրէկտօր > Ղրբ. դըրէկտօր և ալլն:

Այդ նշանակում է, թե բոլոր այն բառերը, որոնց մեջ այս բարբառները տեղաշարժ չեն կատարում, համեմատաբար նոր փոխառություններ են, որ նշանակում է, թե այդ բառերը ընկել են այդ բարբառների ոլորտն ավելի ուշ ժամանակ: Եկատի ունենալով, որ այդ բարբառներին մեջ թուրք-թաթարերեն բառերն ընկել են անմիջական ճանապարհով, մենք կարող ենք սրտել, թե այդ բարբառներին տեղաշարժի հատկությունը ո՞ր ժամանակվանից է սկսել կորչել: Թուրք-թաթարական հետևյալ բառերը, որոնք բառասկզբին ձայնեղ ունեն, այդ բարբառներում մնում են ձայնեղ.

բուրք. ba'ban > Ուրմիա՝ բաբան > Խոյ՝ բաբան.

» bəqam > Ուրմիա՝ բաղամ > Խոյ՝ բաղամ.

» bari t > Ղրբ. բարթ, Ուրմիա՝ բարութ > Խոյ՝ բարութ և ալլն.

» biγ > Ղրբ. բէգ, բէխ > Ուրմիա՝ բէգ > Խոյ՝ բէգ և ալլն.

» beg > Ուրմիա՝ բագ՝ > Խոյ՝ բէգ՝ > Վան՝ բէգ և ալլն.

» bəγa > Ուրմիա՝ բուգա, > Խոյ՝ բուգա և ալլն:

Այդ նույն օրենքով ձայնեղները պահպանվում են արարերեն և պարսկերեն նոր փոխառությունների մեջ, օրինակ՝

արաբ. bazzaz > Ուրմիա՝ բազազ > Խոյ՝ բազազ > Մարաղա՝ բազազ:

» bilasan > Ուրմիա՝ բալասան > Խոյ՝ բալասան.

» divi Ուրմիա՝ դավէ > Խոյ՝ դավի - գատարա.

պրս. gai > Մարաղա՝ գ'աջ > Ուրմիա՝ գ'աջ > Խոյ՝ գ'աջ.

պհլ. bachs Ղրբ. բախշի > Ուրմիա՝ բախշէ > Խոյ՝ բախշէ.

պրս. gaz Ուրմիա՝ գ'ազ Վան՝ գ'ազ > Խոյ՝ գ'ազ:

Նշանակում է, այս բարբառները իրենց բարբառային որակը սկսել են կորցնել X—XII դարերից, այսինքն՝ ճիշտ այն ժամանակ, երբ ընկ. էղ. Աղայանը ենթադրում է դրանց առաջացումը: Պարզ է, որ այս մոտեցումն ունեցողի աչքում պատմությունը զլխի վրա է կանգնած:

¹ Տե՛ս մեր «Հայ բարբառագիտություն», 1953, էջ 129:

² Տարօրինակ է, որ հոգիածագիրը հայտարարում է. «Պրոֆ. Ար. Հարիրյանն ասում է, թե այդ տեղաշարժին չեն ենթարկվում նորագույն պարսկական փոխառությունները, քնչպե՛ս՝ բախա, բախշի, բիժ, բլրուր, գազ, գաղար...: Այդ պնդումը չի հաստատվում բարբառների ավալներով (նույն տեղում, էջ 219—220): Տեսանք, որ այդ փաստերը հաստատվում են բարբառների ավալներով:

Հիշենք, որ հնդեվրոպական բառերը և դրարարում փոխառված բաղա-
թիվ բառեր ենթարկվում են առաջին տեղաշարժին. ուրեմն ալս բարբառների
բաղաձայնական համակարգի բարբառային օրենքը կամ նրանց արտասանական
բաղան հաստատուն ու կայուն է եղել դրարարի կենդանության ժամանակաշրջ-
անում, այսինքն՝ նրանք եղել են հենց դրարարի կողքին և նրա հետ միաժա-
մանակ բարբառային այնպիսի կուռ օրենաչափություններով, ինչպիսիք
ունեն նրանց ժամանակակից դրարարն իր ներսում:

Դրանից հետո որքան տարօրինակ է հնչում հոգվածագրի պնդումը, թե
«բերված օրինակներն անառարկելի կերպով (այն էլ անառարկելի կերպով
— Ա. Դ.) ցույց են տալիս, որ հիշյալ բարբառները ոչ թե շարունակել են հնդեվ-
րոպական բաղաձայնական սխեման անփոփոխ, կա՞ մասնակիորեն փոփոխ-
ված վիճակով, այլ դրաբարյան համակարգի նոր փոխառությամբ վերստին
հանդել են հնդեվրոպական բաղաձայնական համակարգին»:

Բայց եթե մի րոպե այս արտասովոր տեսակետին համաձայն' նք, իրա-
վունք չունենք հարց տալու, թե որո՞նք էին այն պատճառները, որ մղեցին այս
բարբառներին հազար տարի առաջ կորցրած իրենց համակարգը վերսկսելու
նախնելու: Եթե՞ մերժենք բարբառները հնդեվրոպական նախալեզվին կապելու
սկզբունքը, ապա հայ բարբառների մեջ այժմ գոյություն ունեցող շնչեղ ձայ-
նեղների շարքը կդառնա առեղծվածային կամ հրաշքով կստարված մի երե-
վույթ: Բնական, հայ բարբառների բաղաձայնական համակարգի այլապահու-
թյունների պատճառները կարող են լինել ներքին և արտաքին: Ներքին պատ-
ճառը նախամայր լեզվից առաջանալու պրոցեսում կատարվող օրինաչափ փո-
փոխություններ են, որոնց ելակետը, բնականորեն, պետք է լինի նախամայր
լեզվի բուն համակարգը:

Արաափին պատճառները բխում են ազդեցություններից, որ ամեն մի լեզու
և նրա բարբառները կարող են կրել շրջապատող լեզուներից: Արդ, մենք պնդում
ենք, որ հայ բարբառներում գոյություն ունեցող շնչեղ ձայնեղների համակարգը
ժառանգված է նախամայր լեզվից, որը միակ լեզուն է աշխարհում, որ ունեցել
է այդ համակարգը: Այդ համակարգը ժառանգել են նույնությամբ նաև հին
հնդկերենը, և ժամանակակից հնդկերենի բաղմաթիվ տարատեսակները: Եթե
մերժենք այդ բացատրությունը, այն ժամանակ պետք է ընդունենք, որ մեր
բարբառների մեջ եղած բաղաձայնական փոփոխությունները կատարվել են
շրջապատող լեզուների ազդեցությամբ: Բայց որպեսզի բարբառներում առա-
ջանային շնչեղ ձայնեղներ, անհրաժեշտ էր, որպեսզի այդպիսի հնչյուններ
ունենային հայերենին շրջապատող լեզուները: Բայց հայտնի է, որ ո՛չ փոքրս-
սիական, ո՛չ կովկասյան և ո՛չ էլ մի այլ լեզու շնչեղ ձայնեղների շարքը չունի:
Հետևաբար, մեր բարբառներում դրանց առկայությունը կարող է ունենալ մի
բացատրություն, այն է՝ հայ բարբառների շնչեղ ձայնեղների շարքը ժառանգ-
ված է նախամայր լեզվից:

Պրոֆ. էզ. Աղայանը այդ նեղ գրությունից զուրս գալու համար ընդունում է,
որ մեր հին բարբառները իրոք որ ժառանգել են շնչեղ ձայնեղների խումբը
նախամայր լեզվից, բայց հետո կորցրել են, որովհետև միանալով առաջացրել
են դրարար լեզուն, որն այդ հնչյունները չունի և դարձրել հետո մեռ նոր բար-
բառներ իրենց մեջ, չդիտես ինչ պատճառներով, վրակնեղներ և՛ այդ հոն-
չյունները: Կարծես թե ինքն էլ զգում է իր տեսության հիմքերի խախտությունը
և ասում է.

Մեր բարբառների մի որոշ մասը (Մեղրի, Կարճեան, Շաղախ, Ղարադաղ և այլն) անցյալ կատարյալի համադրական ձևերը չունի, դրա փոխարեն գործ է ածում վաղակատար դերբայով կազմվող վերլուծական ձև (Ղրդ. վարալ ըմ> վարեցի, Կարճև. քիլիլ ըմ>գրեցի, Ագուլիս՝ թակալ ըմ>թակեցի, Առտիալ՝ սիրել իմ> սիրեցի և այլն)։ Այդ վերլուծական ձևերը նույնն են սլավոնական լեզուների պերֆեկտի և պրեսկիտպերֆեկտի հետ (писал есмь... писал быхъ)։ Պարզ է, որ այդ ձևերը դալիս են հնդեվրոպական նախամայր լեզվի վիճակից, դրանցից մի մասը բարբառները պահպանել են, իսկ գրաբարը կորցրել է և փոխարինել համադրական անցյալ կատարյալի (աորիստի) ձևերով, իսկ անցյալ դերբայով կազմվող ձևերին տվել է վաղակատար-հարակատար իմաստը։ Այստեղ ևս երևում է, որ մեր բարբառների կազմությանը որոշ տարրեր դրաբարից ավելի հին են և հին են այն պատճառով, որ ոչ թե իրենց հնդեվրոպական վիճակը փոխել են, այլ պահպանել, իսկ գրաբարը փոխել է կամ կորցրել և այդ պատճառով հեռացել բարբառներից։ Պարզ է, որ բարբառների գոյացումները որոշ մասով գրաբարի նախորդ շրջանումն են կատարվել։

Այսպիսով, ձևաբանության հարցերում մեր դեմ պրոֆ. էդ. Աղայանի կատարած առարկությունները նույնպես բխում են նյութի մեջ շխտանալուց և արգարացի չեն։ Այժմ ամփոփենք։

Պրոֆ. էդ. Աղայանը մեր բարբառների պատմությունը կառուցում է հետևյալ ձևով. «եղև են հին հայերեն բարբառներ, որոնք միաձուլվելով տվել են հին հայերեն լեզուն կամ որոնցից մեկը հայ ժողովրդի կազմավորման պրոցեսում ընդհանրացել է, դարձել ընդհանուր լեզու, հին հայերեն համաժողովրդական լեզու, և կան նոր հայերեն բարբառներ, որոնք առաջացել են հայերենից, որը նույնն է թե գրաբարից՝ սաղմնավորվելով II—IV դարերում և զարգանալով հատկապես VII—XII դարերում։ Նոր հայերեն բարբառների առաջացումը, նրանց վերջնականապես ձևավորվելը նշանակել է միաժամանակ գրաբարի մահացումը»¹։

Այս դրույթից տեսնում ենք, որ պրոֆ. էդ. Աղայանը համաձայն է մեզ հետ, որ հայերենը հին շրջանից ունեցել է բարբառներ։ Ավելին, նա բարբառներ է ենթադրում հենց այն ժամանակվանից, երբ հայերեն լեզուն անջատվել է հնդեվրոպական ընդհանուր լեզվից։ Այդ վիճակը նա կոչում է նախահայերեն, որով խոսում էին մի շարք ցեղեր, որոնք «հենց հայաստ արմեններն էին»։ Քանի որ նախահայերենը այդ ցեղերի կամ նրանց միության ընդհանուր լեզուն էր, ապա միանդամայն բնական էր, որ նա ունենար իր բարբառները։ «Հայ ժողովրդի կազմավորման երկարատև պրոցեսում նախահայերենը մի կողմից յուրացվել է հայ ժողովրդի կազմի մեջ մտած այլախոս ցեղերի կողմից, որոնց լեզուները ժամանակի ընթացքում պարտվել ու մահացել են, իսկ մյուս կողմից նախահայերենի բարբառների հիման վրա հենց այս պրոցեսում կազմավորվել է հայերեն համաժողովրդական լեզուն։ Ահա այդ հնագույն բարբառների մահացման պրոցեսը, թեև սկսած շատ վաղ շրջանից, մոտավորապես մեր թվականությունից առաջ XV—XIV դարերից հասնում է մինչև մեր թվականության I—II դարերը և առանձին հետքերով միայն ձգվում մինչև IV—V դարերը»²։

¹ էդ. Աղայան, նշվ. աշխ., էջ 229—230։

² Նույն տեղում, էջ 227։

Այս համակարգը այդ բարբառների արտասանական բաղան է և, բնական է, որ նրանք պարսկական և ասորական բառերը վերցնելիս, նրանք մեջ եղած ձայնեղները վերածեին շնչեղ ձայնեղների, իսկ խուլերը՝ ձայնեղների, քանի որ նրանք այլ կերպ չէին կարող ընկալել, բայց եթե ձայնեղը շնչեղ ձայնեղ, իսկ խուլը ձայնեղ (խուլ արտասանելու հմտություն չունենին և հիմա էլ չունեն), ինչպես մեր ժամանակակից աղբյուրները, որոնք ք, ւ, ք խուլերն արտասանում են շնչեղ խուլ քh, ւh, քh, օրինակ՝ ռուսերեն Пётр, աղբյուր Phjotr և այլն: Հենց դա ապացույց է, որ այդ բարբառները հնդեվրոպական շնչեղ ձայնեղի և ձայնեղի համակարգը այնքան ուժեղ են պահպանել, որ օտար լեզվի հնչյունները հարմարեցնում են իրենց արտասանության, որը բխում է իրենց արտասանական բաղադրից: Էլ ի՞նչ խոսք կարող է լինել այն մասին, թե եթե բաղաձայնները փոխվել ու դարձել են շնչեղ ձայնեղներ ու պարզ ձայնեղներ, նշանակում է կատարվել է հնչյունական փոփոխություն:

Այո՞, «հնչյունական փոփոխություն» կատարվել է, բայց փոխառյալ բառերի մեջ, որոնք հարմարեցվել են մայրենի բառերի արտասանության սխառեմին, ուրեմն հնդեվրոպական բաղաձայնական համակարգի շնչեղ ձայնեղները և ձայնեղները պետք է որ անփոփոխ, իբրև հատկություն, պահպանված լինեն, որպեսզի օտար բառերն էլ ենթարկվեն մայրենի բառերի կանոններին և հնչյունափոխվեն: Արդ, օտար բառերի հնչյունների փոփոխությունները դեպի հնդեվրոպական սխառեմը հենց վկայում են, որ հնդեվրոպական սխառեմը բարբառը կուռ կերպով պահպանել է և իր լեզվական ոլորտի մեջ ընկած օտար բառերը ենթարկել իր պահպանած օրինաչափությանը: Հասարակ աչքով դիտելով դա հնչյունափոխություն է, բայց մի հնչյունափոխություն, որ վկայում է, թե հնդեվրոպական համակարգը բարբառը օրինաչափորեն պահպանել է: Ընդհակառակն, եթե փոխ առնվող բառերը ենթարկվեն հնդեվրոպական սխառեմի օրինաչափության, դա կնշանակեր, որ բարբառը կորցրել է իր մայրենի հատկությունները, ժառանգած հատկությունները և ապրում է քայքայման պրոցես:

Մեր բարբառագիտության գրքում, համեմատական հնչյունաբանությունը շարադրելիս, բարբառների համակարգը համեմատում ենք երկու տեսակ՝ մեկ կնիկով գրաբարի համակարգից, մեկ էլ հնդեվրոպական լեզվի համակարգից: Երբ ելնում ենք գրաբարյան համակարգից, ստացվում է այն սխալ տպավորություն, թե մեր բարբառները բաղաձայնական համակարգը տեղաշարժել են աջից ձախ և ձախից աջ, այսինքն՝ ձայնեղը իլացրել են և խուլը ձայնեղացրել: Բայց դա թվացող օրինաչափություն է և թյուրիմացության մեջ է գցել պրոֆ. Աղայանին: Այսպես՝ նա ասում է. «...Համեմատելով բարբառի շանիկ գյուղում գրաբարյան ձայնեղները իլանում են, իսկ խուլերը ձայնեղանում...»:

Նման երևույթ գոյություն ունի նաև Կիլիկիայի և Անտիոքի շրջանի բարբառներում:

Մենք, դասակարգումը կատարելիս, համեմատության ելակետը վերցրել ենք գրաբարի սխառեմը: Բայց չէ՞ որ հայտնի է, որ գրաբարի սխառեմն ինքն ստացվել է հնդեվրոպականից առաջին լրիվ տեղաշարժի միջոցով. հետևաբար, այդ սխառեմը իբրև համեմատության ելակետ վերցնելը սոսկ աշխատանքային պրիում է և բնավ չի արտացոլում բարբառների զարգացման պատմական իսկական պրոցեսը: Այդ պրոցեսը իսկական պատկերով կերևա այն ժամանակ, երբ մեր բարբառների և գրաբարի համակարգը համեմատենք հնդեվրոպական նախափեմակին: Այսպես, վերցնենք, օրինակ, այդ նույն բարբառ-

⁴ Ընչեղ ձայնեղները վերածվում են խոսքերի, հնդեվրոպական ձայնեղները պահպանվում են, գրաբարի համեմատում յափք թվում է, թե խոսքը վերածվում է ձայնեղի, իսկ ձայնեղը պահպանվում է:

տարածվում է ամբողջ համակարգի վրա և չկա սիստեմային բացառություն:

Այս ներքին օրենքը կուռ, մնայուն, տևականորեն գործող օրենք է եղել, ինչպես որ հիմա էլ կա: Այդ օրենքն է հենց պիտակցել լեզվաբանության շատ պրիմիտիվ վիճակում մեր հնագույն լեզվաբաններից մեկը՝ Դիոնիսիոս Թրակացու մեկնիչը VII դարում, որ ասել է.

«Այլ էր իսկ ճշմարտապէս և ի տեղակի խառնիցն, որպէս բազուկ, պազուկ, փազուկ»¹ (զանազան խոսվածքներում իսկապես շատ տարբեր է այդ, ինչպես, օրինակ, բազուկ, պազուկ, փազուկ): Այսպիսով մեր առաջարկած հայ բարբառների բաղաձայնական համակարգի այս ներքին օրենքը գործել է շատ հնուց: Մեր կարծիքը երաշխավորում է և հաստատում 12 դար առաջ ապրող մեր լեզվաբանական նախահայրերից մեկը: Կարծում եմ՝ թերահավատության որևէ տեղ և որևէ պատճառ այլևս չի մնում:

Այսպիսով, պրոֆ. էդ. Աղայանի առաջարկած «հնչյունական ատավիզմի» օրենքը հակասում է հայոց լեզվի զարգացման պատմական օրինաչափությանը:

Պրոֆ. էդ. Աղայանը մեր դեմ փորձում է բերել մի առարկություն ևս, որը, իրոք, նրա բոլոր առարկությունների ամենածանր հրանոթն է:

Հայանի է, որ դրաբարի գ հնչյունը երկու ծագում ունի. մեկ՝ նա առաջացել է հնդեվրոպական v(w) հնչյունից, օրինակ, հնդեվր. vedo > գրաբ. գեռ. երկրորդն էլ հնդեվրոպական ǵʰ հնչյունից. օրինակ՝ հնդեվր. ǵʰhəni > գրաբ. գան (ծեծ):

Պրոֆ. էդ. Աղայանն ասում է, թե հնդեվրոպական v(w) հնչյունից չէր կարող ստացվել բարբառային գ՝ հնչյունը, այլ նա նախ պիտի վերածվեր գ-ի. հետո վերածվեր գ՝-ի. «Անվերապահ ճշմարտություն է, որ նախ v(w)-ն պետք է դառնար գ, իսկ հետո էլ՝ այդ բարբառներում շնչեղության, ախինքն՝ դառնար գ՝»²:

Նախ պիտի ասենք, որ պրոֆ. էդ. Աղայանին հայանի չէ, թե ի՞նչ ուղիներով այդ v(w)-ն դրաբարում դարձել է գ:

Մեր կարծիքով այդ v(w)-ի արտասանությունը վերածվել է նախ «դվ»-ի, մոտենալով հնդեվրոպական ǵʰh-ի արտասանությանը, որովհետև այդ հնչյունն ուներ շրթնային տարր, և միայն հետագայում, ընդհանուր օրենքով ենթարկվելով առաջին տեղաշարժի, դրաբարում վերածվել է պարզ ձայնեղի: Որ նա այդ ձանապարհն է անցել, դրա համար կարող ենք միայն մի ապացույց բերել:

Voinio բառը, որ հնդեվրոպացիները փոխ են առել միջերկրական լեզուներից, հավասարվել է բոլոր այն հնդեվրոպական բառերին, որոնք սկսվում են v(w)-ով, իսկ այդ հնչյունը դրաբար լեզվի մեջ ենթարկվել է նույն օրինաչափության, ինչ-որ հնդեվր. ǵʰh-ն: Հետևաբար, նա հնդեվրոպական արտասանության մեջ ձուլվել է ǵʰh-ին, նմանվել է նրան և հետո հայերեն դրաբար լեզվի մեջ վերածվել գ-ի: Նախահայերենում voinio բառը դարձել է ǵʰhoinio, որ շատ հին ժամանակներում մեզանից վերցրել են վրացիները և արտասանում են դ՝վինո, ավան. ǵwino³, մինչդեռ «վ» հնչյունով սկսվող պարսկերեն փոխա-

¹ Н. Адонц, Дионисий Фракийский и армянские толкователи, էջ 149:

² էդ. Աղայան, նշվ. աշխ., էջ 218:

³ Հր. Անտոյան, Արմատական բառարան:

առնությունները նույն վրացիները մեզնից վերցրել են սովորական «վ» հնչյունով (հմմտ. պիլ. *vaṣṭ* > հայ. *վագր* > վրաց. *ვაგრი* (վիգրի)¹: Նշանակում է զ'վի-նո բառը վրացիները հայերենից փոխ են առել այն ժամանակ, երբ հնդեվրոպական *ṛ* և *ṷ* դեռ չէին վերածվել «զ» հնչյունի: Ուրեմն հնդեվրոպական *v(w)*-ն հայերենում նախ նմանվել է *gʷ* և -ին, ապա նրա միջոցով վերածվել *q* -ի, ապա զրաբարում՝ *q* -ի:

Այսպիսով, պրոֆ. էդ. Աղայանի այս ծանր հրետանին էլ գործին չօգնեց.

Մենում է ճշմարիտ մեր պնդումը. հայերեն լեզվի բոլոր բարբառների համակարգը ծագմամբ հնդեվրոպական է, ենթարկված առաջին տեղաշարժի և նրա բոլոր տարբերակների օրենքին: Եվ պատահական էլ չէ, որ մեր այն բարբառների համակարգն է ավելի մոտ հնդեվրոպականին, որքան աշխարհադրոն դասավորված են հայերի հին բնօրրանում՝ Փոքր Հայքում և նրա մերձակայքում: Եվ որքան բարբառը հեռու է այդ բնօրրանից, այնքան նա ավելի է ենթարկված փոփոխությունների, զրանում համոզվելու համար պետք է նայել քարտեզին:

Այժմ զբաղվենք այն առարկություններով, որ ընկ. Աղայանը բերում է մեր դեմ ձևաբանության հարցերում:

Մենք այն միտքն ենք հայտնել, որ մեր բարբառների ձևաբանական կառուցվածքը ավելի հին ժամանակներից է գալիս, քան մեզ ծանոթ գրաբարի կառուցվածքը, այսինքն՝ թե մեր բարբառների ձևաբանական համակարգը կազմվել է ոչ թե *V* դարում կամ նրանից հետո, այլ նրանից շատ առաջ: Այժմ մենք պնդում ենք, որ այդ կառուցվածքը իր հիմքերով ձևավորվել է նույնիսկ նախքան մեր դարաշրջանը: Մեզ թույլ ենք տալիս հիշեցնելու պրոֆ. էդ. Աղայանին այն, որ մենք ոչ միայն գիտենք, որ գրաբարի ձևաբանական կառուցվածքը շատ ավելի կոնսերվատիվ է, քան բարբառներինը, այլև այն, որ մենք սահմանել ենք գրաբարի քերականական կառուցվածքի մի ներքին օրենք, որը ձևակերպել ենք իբրև հնդեվրոպական նախալեզվի քերականական ձևույթների առաջին իմաստավորման օրենք²: Իսկ բարբառների ձևաբանական կառուցվածքի մեջ գործող օրենքը մենք անվանել ենք հնդեվրոպական նախամայր լեզվի քերականական ձևույթների երկրորդ իմաստավորման օրենք, որ պրոցեսի աեսակետից հաջորդում է առաջինին, այսինքն գրաբարին: Առերևույթ թվում է, թե բարբառների համակարգը առաջացել է գրաբարից: Բայց դա այդպես թվում է, եթե մեր մտածողությունը լինի ուղղագիծ, զուտ տրամաբանական, համաձայն որի գրաբար լեզուն, իբր, առաջացել է հնդեվրոպականից, իսկ գրաբարից հետո էլ և նրա վերասերումով առաջացել են մեր բարբառները: Սակայն պատմական պրոցեսը այդպես ուղղագիծ չէ:

Հայտնի է, որ հնդեվրոպական նախամայր լեզվի ձևաբանական կառուցվածքը եղել է երկձևույթ, ըստ որում, բառի մեջ գիտակցվել է հիմք, որպես հիմնական ձևույթ, և վերջավորություն, որպես երկրորդական քերականական ձևույթ. օրինակ՝

vedo-bis* (դեսով):

¹ Հր. Անանյան, Արժատական բառարան:

² Տե՛ս Հայկական ՍՍՌ-ի ԳԱ «Տեղեկագիր», հատ. սիտ., 1953, № 8:

Բառահիմքն ունեցել է ձայնավոր վերջավորություն, իսկ բաղաձայն վերջավորություն ունենալու դեպքում՝ քերականական վերջավորություններն իրեն կցելու համար հաճախ ստացել է թեմատիկ ձայնավոր:

Հնդկերեն, հունարեն, լատիներեն և, հատկապես, գրաբար լեզուներն իրենց առաջանալու պրոցեսում հնդեվրոպական բառի ամբողջ կազմությունը վերաիմաստավորեցին, երկձևույթ կառուցվածքը վերածելով եռաձևույթ կառուցվածքի, ըստ որում հիմքի վերջի ձայնավորը վերաիմաստավորեցին որպես քերականական անկախ ձևույթ, դարձնելով նրան հոլովման և խոնարհման նշան կամ թեքման նշան: Օրինակ՝ հնդկեր. vedo-bis > գրբ. գետ-ո-ով: Միայն սլավոնական լեզուները երկձևույթ կառուցվածքը նորից վերածեցին նույնպես երկձևույթ կառուցվածքի¹, բայց այս անգամ հնդեվրոպական հիմքի ձայնավորը փոխանցելով վերջավորությանը:

հնդկեր. vedo-bis* > սլավ. БОД-ОЮ

Այսպիսով, միևնույն կառուցվածքից հնդեվրոպական մայր լեզուները առաջացրին եռաձևույթ կառուցվածք և նոր տիպի երկձևույթ կառուցվածք:

Գրաբար լեզուն հնդեվրոպական բոլոր մայր լեզուներից ամենահետևողական կերպով առաջացրեց եռաձևույթ կառուցվածքը, որի հետևանքով ստացվեց գրաբար լեզվի դասական թեքական տիպը, որ այս տեսակի մեջ ավելի կատարյալ է, քան հնդկերեն, հունարեն և լատիներեն լեզուները: Նրա այս կառուցվածքը կարող էր առաջանալ հնդեվրոպական նախամայր լեզվից առաջին իմաստավորման ներքին օրենքը հետևողականորեն կիրառվելու միջոցով: Ուստի սխալ է էդ. Աղայանի այն պնդումը, թե գրաբար լեզուն առաջացել է բարբառների համադրությունից կամ որևէ հին բարբառի հիման վրա: Գրաբար լեզուն իր, մեզ հայտնի, որակը, մեր կարծիքով, ստացել է երկրորդ դարից և սրահպանել մինչև V դարը, հասցնելով V դարում իր ներքին օրենքների դարգացման գագաթնակետին, որից այն կողմ, ինչպես ճիշտ կերպով դիտել է մեծանուն հայագետ Հ. Աճառյանը, սկսում է գրաբար լեզվի դասական համակարգի քայքայումը:

Գրաբարին նախորդել է հայերենի մի այնպիսի տարատեսակ, որն իր քերականական կառուցվածքում ունեցել է հնդեվրոպական երկձևույթ վիճակի և գրաբարի եռաձևույթ վիճակի մի անցման շրջան: Նա իր ներքին սիստեմն անընդհատ կատարելագործել է այն պատճառով, որ սկզբից եղել է հայերենի այն տարբերակը, որ օգտագործվել է որպես միջտոհմային, միջցեղային ընդհանուր լեզու, իսկ հետագայում՝ համահայկական պետական ընդհանուր լեզու, լինելով միաժամանակ ոստանների խոսակցական լեզու:

Իսկ նախագրաբարյան վիճակից առաջացել են մեր հիմնական բարբառները, որոնք սլավոնական լեզուների նման հնդեվրոպական տարրալուծվող երկձևույթ քերականությունը որոշ մասերում վերածել են նորից երկձևույթ վիճակի, հնդեվրոպական հիմքի ձայնավորը տեղափոխելով վերջավորությանը: Այդ կատարվել է այն պատճառով, որ տեղական լեզուները հայերեն խոսվածքների վրա ունեցել են շատ ավելի մեծ ազդեցություն, քան ընդհանուր լեզվի վրա: Նկատի ունենալով, որ տեղական այլևայլ լեզուները ընդհանուր առմամբ եղել են կցական սիստեմի, նրանց ազդեցությունն էլ մեր բարբառների քերական

¹ А. М. Селищев, Старославянский язык, часть II, 1952, էջ 93:

նություն վրա եղել է աճող ուղղությամբ և շեղել նրանց հայերենի ընդհանուր լեզվի ֆերականական սիստեմից: Տեղական լեզուների կցականությունն արտահայտվել է նաև այն ազդեցությամբ, որ նրանք ունեցել են գրաբարի վրա, որի ֆերականական կառուցվածքի մեջ կցականությունը նույնպես բուն է իր համապատասխան տեղը (նկատի ունենալով հոլովակազմիչներն ու գեմքի վերջավորությունները): Հենց հնդեվրոպական թեքականության ժառանգությունն էր տեղական լեզուների կցականության ազդեցությամբ պետք է բացատրել գրաբար լեզվի եռաձևությամբ ֆերականական կառուցվածքի առաջացումը: Թեև ներքին կանոններով գրաբար լեզվի և հայերենի հիմնական բարբառների մեջ կառուցվածքային որոշ տարբերություններ կային, բայց լեզվական նյութի տեսակետից բացարձակ ընդհանրություն գոյություն ուներ, այդ պատճառով էլ նրանք միմյանց լավագույնս հասկանում էին: Մյուս կողմից, պիտի նկատի ունենալ, որ բարբառներում ևս նախադրարարյան կամ հնագույն հայերենից ժառանգվել և նույն օրինաչափությամբ զարգացել էին թեքական այնպիսի տարրեր, ինչ որ ընդհանուր լեզվի մեջ, նոր անունով կոչված՝ գրաբարի մեջ: Այսպես, գրաբարի ներկայի և անցյալ անկատարի կազմությունները, որոնք արտացոլում են հնդեվրոպական մայր լեզվի ներկան և անցյալի անկատարը, բոլոր բարբառներում անվթար պահպանվել են որպես ըղձականի ձևեր, այժմ էլ մեր գրական լեզվի մեջ դրանք մնում են որպես ըղձականի ձևեր: Անցյալ կատարյալը, որ նույնպես արտացոլում է հնդեվրոպական ֆերականական կառուցվածքը, համարյա նույնությամբ պահպանվել է բոլոր բարբառներում, գրաբարին հար և նման: Շեղումներն այնքան փոքր են, որ կարելի է նկատի չառնել: Այսպես էլ հրամայական ձևերը և այլն: Այդ ամենը նշանակում են, որ բարբառների ձևաբանական տարբերությունները գրաբարից ոչ թե գրաբարից լիովին տարբերություններ են, այլ հայերեն լեզվի նախադրարարյան վիճակից: Բացի ընդհանուրից, բարբառները նախադրարարյան հայերենի վիճակից սկսած կազմել են նաև ինքնուրույն ձևեր: Ինքը պրոֆ. Աղայանը փորձում է գտնել այդ ինքնուրույն ձևերը, որ նա անվանում է հին բարբառների մնացորդներ: Բայց նա զժրախտաբար այդ որոնում է միայն գրաբարի մեջ, որտեղ համարյա ոչինչ չի գտնի. եթե ալը նույն որոնումը նա կատարեր բարբառներում, ապա ավելին կգտներ:

Որ մեր բարբառները իրենց փերականական կառուցվածքի որոշ մասերը ժառանգել են ոչ թե գրաբարից, այլ ուղղակի հայերենի նախադրարարյան վիճակից, երևում է Արամոյի և Փաբուսի բարբառների մի հետաքրքրական փաստից:

Այդ երկու բարբառները իրենց մեջ պահպանել են երկու գերանուններ. որոնք գրաբարում չկան, բայց որոնք հնդեվրոպական գերանուններ են և գոյություն ունեն հնդեվրոպական մի շարք լեզուներում (լատիներենում, արիական լեզուներում, սլավոնական լեզուներում և այլն)¹: Այդ հետաքրքրական հարցը, թե ինչ են բարբառները պահպանել հնդեվրոպական նախամայր լեզվից, որ գրաբարում չկա, շատ կարևոր է և, զժրախտաբար, ոչ ոք մեզանից չգրանով չի գրազվում: Դա պատմական բարբառագիտության կարևոր պրոբլեմներից մեկն է:

¹ Տե՛ս մեր «Հայերենի նորահայա բարբառների մի նոր խումբ», Երևան, 1958, էջ 53:

Ինչ վերաբերում է այն հարցին, ինչ մեր բարբառները գրաբարից առաջ կազմել են քերականական այնպիսի ձևեր, որոնք գրաբարին անհայտ են, ապա դրա համար մենք իբրև ապացույց էինք վերցրել բարբառներում գոյություն ունեցող հարակատար գերբայր «ած» և «ուած» վերջավորությամբ: Մեր միտքն այն էր, թե գրաբար լեզվի մեջ «ած» և «ուած» վերջավորությամբ բառերը ածականի, հաճախ նաև գոյականի իմաստ ունեն¹, բայական իմաստ այդ ձևերում չկա: Ընդհակառակն, գրաբարը, իբրև ածականների, դրանց վրա ավելացնում է իր ֆ հոգնակին, կազմելով գոյականներ (կալուածք, շինուածք, խնդրուածք, հարուածք և այլն): Գրաբարի այդ հատկությունն անցել է ժամանակակից հայերենին, որի օգնությամբ և մենք կազմում ենք նոր, ածանցված բառեր (խոսվածք, կտրվածք, կառուցվածք և այլն):

Բայց եթե գրաբարի մեջ չի գիտակցվում, թե այդ բառերը բայական գաղափար են արտահայտում, ապա գա ապացույց է, որ այդ կազմությունները գրաբարին չեն, այլ գրաբարին շրջապատող բարբառներին, որոնցից այդ կազմությունն անցել է գրաբարի մեջ:

Պրոֆ. էդ. Աղայանը մեզ առարկում է, թե «ած» և «ուած» ածանց ունեցող բառերը սոսկ ածականներ են եղել, որոնք, ինչպես և այլ տիպի վերջավորություն ունեցող ածականներ (ուկ-յեղյեղուկ, ալ-այլուկ և այլն), բարբառների մեջ վերածվել են դերբայների (քնուկ, նստուկ և այլն):

Սակայն պրոֆ. էդ. Աղայանը չի նկատում մի շատ կարևոր տարբերություն. այդ տարբերությունը այն է, որ «ուած» ածանց ունեցող բառերի մեջ առկա է ու կրավորական բայական ածանցը, իսկ կրավորականության գաղափար անունները չունեն, կրավորականության կատեգորիան գոյություն ունի հայերենի միայն բայերում, հետևաբար, ուած (կալուած, շինուած) ածանց ունեցող բառերը բայական կատեգորիայի բառեր են:

Հայտնի է, որ գրաբարի կրավորական կատեգորիան արտահայտվում է «ի» խոնարհման ձևովներով և ու-ն գրաբարի համար ձևաբանական որևէ արժեք չունի: Հետևաբար, այդ ձևովներով բառերը գրաբարը վերցրել է բարբառներից, որոնք այդ ձևովներով կազմում են հարակառար դերբայներ, որի (ձևովների) մեջ կա նաև ածականի իմաստ, սակայն կապված կատարված գործողության ըմբռնման հետ:

Բայց գրաբարն այդ ձևերը յուրացնելով նաև դրանցից գոյականներ է կազմել, հետևաբար այս ձևերի փոխառությունները գրաբարում շատ հին են: Եթե այդ փոխառությունները հին են, ուրեմն գրաբարից տարբերվող քերականական կազմությունները բարբառներում նույնպես հին են, այնքան հին, որ գրաբարը դրանք փոխ է առել բարբառներից և յուրացրել միմիայն մասնակի իմաստով, ածականի իմաստով, ճիշտ այնպես, ինչպես մենք այսօր գրական լեզվի մեջ ունենք գրաբարյան կազմություններ նրանց մասնակի իմաստով: Օրինակ «Է» ածանցը գրաբար լեզվի մեջ հոգնակի կազմության ձև է (երկինք, երկանք, տիեզերք), և մենք այս «Է» ածանցը վերցրել ենք և այժմ գոյականներ ենք կազմում եզակի իմաստով (ոտք, ձեռք, միտք, գրվածք և այլն): Այդ անում ենք մենք այն պատճառով, որ այդ ձևը գրաբարից փոխ ենք առել շատ հին ժամանակներում, տվել նրան մի մասնավոր իմաստ և օգտագործում ենք այն,

¹ ՏԼ՝ս Ա. Սրբաճանյան, հայերենի դերբայները և նրանց ձևաբանական նշանակություններ, Երևան, 1953:

ենթարկելով մեր լեզվական մտածողության կանոններին: Եթե ամբողջ գրաբարը շինենք, բայց մեկ հայտնի լինեն, որ անցյալում հոգնակին Բ ածանցով է կազմվել, մենք իրավունք կունենայինք պնդելու, որ մեր ժամանակակից գրական լեզվին նախորդել է մի տարբեր հայերեն լեզու, որն ունեցել է Բ հոգնակիական ածանց: Եվ մենք իրավացի կլինենք:

Այսպիսով, մեր կարծիքով, մեր բարբառների փերականական կառուցվածքը իր զգալի մասերով բխում է ոչ թե գրաբարից, այլ գրաբարին նախորդող հայերենի վիճակից և դրաբարին զուգահեռ կերպով առաջացել է նախագրաբարյան հայերենից: Իհարկե, գրաբարի հետ դարերով կողք-կողքի ապրելով և ունենալով գրաբարն իբրև առաջատար միջբարբառային ընդհանուր լեզու, մեր բարբառները ոչ միայն գերծ չեն մնացել գրաբարի ազդեցությունից, այլև յուրացրել են նրա բազմաթիվ տարրերը, բայց ենթարկելով այդ տարրերը իրենց լեզվական կառուցվածքի ներքին օրենքներին, ճիշտ այնպես, ինչպես գրաբարն էլ բարբառներից վերցնելով որոշ տարրեր, ենթարկել է իր լեզվական կանոնների ներքին օրենքներին: Չմոռանանք, որ գրաբարի և մեր բարբառների, ինչպես և ժամանակակից լեզվի մեջ ընդհանուր շատ բան կա, նրանց նյութն ու հիմքերն ընդհանուր են, ուստի մեր խոսքը վերաբերում է այն մասնաւի տարբերություններին, որոնք գոյություն ունեն մեր լեզվի զանազան տարբերակների միջև: Չնայած այդ բոլորին, մենք պնդում ենք, որ գրաբարի կենդանի լեզու լինելու ժամանակ մեր բարբառները և գրաբարը միմյանց ավելի էին հասկանալի, քան այսօրվա մեր շատ բարբառները մեր ժամանակակից գրական լեզվին, և ընդհակառակը:

Ինչ վերաբերում է բարբառների վերլուծական և գրաբարի համադրական կառուցվածքների փոխհարաբերությանը, ապա այստեղ ևս պրոֆ. էյ. Աղաջանի դատողությունները նույնպես ուղիղ գծով են և չեն անդրադարձնում պատմական պրոցեսի ընթացքը: Չի կարելի պնդել, թե հնդեվրոպական նախալեզուն ունեցել է միայն համադրական կառուցվածք: Հնդեվրոպական նախամայր լեզվի բայական կառուցվածքի մեջ եղել են և՛ համադրական ձևեր, և՛ վերլուծական ձևեր, այդ ձևերը ժառանգվել են հաջորդների կողմից, և որոշ լեզուներ զարգացրել են համադրական կառուցվածքը, իսկ որոշ լեզուներ էլ՝ վերլուծական կառուցվածքը: Գրաբարի մեջ ևս գոյություն ունեն վերլուծական ձևեր, ինչպես և համադրական ձևեր: Այսպես, օրինակ, գրաբար լեզվի մեջ կան անցյալ զերբայով կազմվող վերլուծական ձևեր: Փաստորեն բարբառները շունեն գրաբարի միայն առաջին և երկրորդ ապառնի համադրական ձևերը, մյուս բոլոր համադրական ձևերը բարբառներում կան: Դրանց դիմաց կազմվել են նոր վերլուծական ձևեր:

Չի կարելի պնդել նաև, որ վերլուծական ձևերը միշտ նախորդում են համադրական ձևերին: Այսպես, օրինակ, բոլոր սլավոնական լեզուները հնում ունեցել են բավական առատ վերլուծական ձևեր (perfectum—писалъ есмь..., plusquamperfectum—писалъ быхъ, պարմանական писалъ быхъ): Իսկ այժմ այդ վերլուծական ձևերը համարյա վերացել են, հատկապես լատինյան սլավոնական լեզուների մեջ, և պահպանվել են համադրական ձևեր: Որ գրաբարը կորցրել է որոշ վերլուծական ձևեր և ուժեղացրել համադրական ձևերը, այսինքն՝ կատարել է ընկ. Աղաջանի պնդմանը հակառակ պրոցես, երևում է մի փաստից:

Մեր բարբառների մի որոշ մասը (Սեղրի, Կարճեան, Շաղախ, Դարաղաղ և այլն) անցյալ կատարյալի համադրական ձևերը չունի, դրա փոխարեն գործ է ածում վաղակատար դերբայով կազմվող վերլուծական ձև (Ղեղ. վարալ ըմ> վարեցի, Կարճե. քիլիլ ըմ>գրեցի, Ագուլիս՝ թակալ ըմ>թակեցի, Առտիալ՝ սիրել իմ> սիրեցի և այլն)։ Այդ վերլուծական ձևերը նույնն են սլավոնական լեզուների պերֆեկտի և պրեսկիտպերֆեկտի հետ (писал есмь... писал быхъ)։ Պարզ է, որ այդ ձևերը գալիս են հնդեվրոպական նախամայր լեզվի վիճակից, դրանցից մի մասը բարբառները պահպանել են, իսկ գրաբարը կորցրել է և փոխարինել համադրական անցյալ կատարյալի (աորիստի) ձևերով, իսկ անցյալ դերբայով կազմվող ձևերին ավել է վաղակատար-հարակատար իմաստը։ Այստեղ ևս երևում է, որ մեր բարբառների կազմության որոշ տարրեր դարարից ավելի հին են և հին են այն պատճառով, որ ոչ թե իրենց հնդեվրոպական վիճակը փոխել են, այլ պահպանել, իսկ գրաբարը փոխել է կամ կորցրել և այդ պատճառով հեռացել բարբառներից։ Պարզ է, որ բարբառների գոյացումները որոշ մասով գրաբարի նախորդ շրջանումն են կատարվել։ Այսպիսով, ձևաբանության հարցերում մեր դեմ պրոֆ. էդ. Աղայանի կատարած առարկությունները նույնպես բխում են նյութի մեջ չիտրանալուց և արգարացի չեն։ Այժմ ամփոփենք։

Պրոֆ. էդ. Աղայանը մեր բարբառների պատմությունը կառուցում է հետևյալ ձևով. «Եղև են հին հայերեն բարբառներ, որոնք միաձուլվելով տվել են հին հայերեն լեզուն կամ որոնցից մեկը հայ ժողովրդի կազմավորման պրոցեսում ընդհանրացել է, դարձել ընդհանուր լեզու, հին հայերեն համաժողովրդական լեզու, և կան նոր հայերեն բարբառներ, որոնք առաջացել են հայերենից, որը նույնն է թե գրաբարից՝ սաղմնավորվելով II—IV դարերում և զարգանալով հատկապես VII—XII դարերում։ Նոր հայերեն բարբառների առաջացումը, նրանց վերջնականապես ձևավորվելը նշանակել է միաժամանակ գրաբարի մահացումը»¹։

Այս դրույթից տեսնում ենք, որ պրոֆ. էդ. Աղայանը համաձայն է մեզ հետ, որ հայերենը հին շրջանից ունեցել է բարբառներ։ Ավելին, նա բարբառներ է ենթադրում հենց այն ժամանակվանից, երբ հայերեն լեզուն անջատվել է հնդեվրոպական ընդհանուր լեզվից։ Այդ վիճակը նա կոչում է նախահայերեն, որով խոսում էին մի շարք ցեղեր, որոնք «հենց հայաստ արմեններն էին»։ Քանի որ նախահայերենը այդ ցեղերի կամ նրանց միության ընդհանուր լեզուն էր, ապա միանգամայն բնական էր, որ նա ունենար իր բարբառները։ «Հայ ժողովրդի կազմավորման երկարատև պրոցեսում նախահայերենը մի կողմից յուրացվել է հայ ժողովրդի կազմի մեջ մտած այլախոս ցեղերի կողմից, որոնց լեզուները ժամանակի ընթացքում պարտվել ու մահացել են, իսկ մյուս կողմից նախահայերենի բարբառների հիման վրա հենց այս պրոցեսում կազմավորվել է հայերեն համաժողովրդական լեզուն։ Ահա այդ հնագույն բարբառների մահացման պրոցեսը, թեև սկսած շատ վաղ շրջանից, մոտավորապես մեր թվականությունից առաջ XV—XIV դարերից հասնում է մինչև մեր թվականության I—II դարերը և առանձին հետքերով միայն ձգվում մինչև IV—V դարերը»²։

¹ էդ. Աղայան, նշվ. աշխ., էջ 229—230։

² Նույն տեղում, էջ 227։

Այստեղ արտահայտված այն կարծիքը, թե հնդեվրոպական վիճակից անշատվելուց անմիջապես հետո նախահայերենը բարբառների է բաժանվել, բավական ծայրահեղ է: Ըստ այդ կարծիքի հնադրւյն բարբառները նախքան մեր թվարկության XV—XIV դարերից սկսած ընթացել են աստիճանաբար միաձուլվելու ճանապարհով: Այս տեսակետը ոչ միայն տրամաբանություն է հանդիսանում, այլև պատմական պրոցեսին: Ըստ այդ կարծիքի մինչև XV դարը բարբառային բաժանում է տեղի ունենում, իսկ դրանից հետո տեղի է ունենում բարբառների միացում: Բայց պատմականորեն ճիշտ կլիներ մտածել, որ հայ դեղը, որ անջատվել է հնդեվրոպական նախաքերից երրորդ հազարամյակում, պիտի բաղմանար և ցեղերի բաժանվեր ավելի ուշ ժամանակ, դոնև XV—XIV դարերից հետո: Հետևաբար, հենց այդ ժամանակ էլ կառաջանային նախահայերենի բարբառները և ո՛չ ընդհակառակն: XV—XIII դարերում, երբ հայերը գտնվում էին Փոքր Հայքում, անպայման կազմում էին ցեղախումբ, ուրեմն և կունենային ենթաբարբառախումբ, որոնցից մեկը, ամենակոնսերվատիվը կլինէր ընդհանուր միջբարբառային լեզու, որովհետև նա բոլորին ավելի հասկանալի կլիներ: Հետագայում, ինչպես հայտնի է, այստեղից հայերը աստիճանաբար ցրվում են, տարածվում ամենից առաջ արևելք՝ դեպի պատմական Հայաստանի տերիտորիան, դեպի Կիլիկիա, Միջագետք և դեպի Սև ծովի հարավային ափերը: Այդ տարածումն անկասկած կկատարվեր առանձին տոհմերով կամ ցեղերով, որոնք ներսում ունենալով մասնավոր միություն, կտեղափոխեին այն այդ նոր վայրերը, ուր որ նրանք դնում էին: Ամեն մի ցեղ էլ կտաներ ընդհանուր հայերենի իր ենթաբարբառը, որ ընդհանուր միությունից հեռանալով ավելի պիտի տարբերվեր մյուսներից, ուրեմն ենթաբարբառների տարբերությունները պիտի խորանային: Հենց այդ տարբերություններն էլ նկատում ենք Փոքր Հայքում, Սև ծովի հարավային ափերում, Կիլիկիայում, Միջագետքում և Հայաստանում դասավորված հայ լարբառների հնչյունական կազմի մեջ:

Դա չի կարող լինել պատահական զուգահեռություն, դա պատմական օրինաչափության անդրադարձում է:

Այնուհետև մեր բարբառները գնալով ավելի կտարբերվեն միմյանցից և ոչ թե կմիանային հեռավալ պատճառներով:

Դեռ II հազարամյակի վերջերին մեր թվարկությունից առաջ, հայ առանձին ցեղեր կամ նրանց տմբողջական հատվածները անցնում էին Եփրատը, կուտակվում Աղձնիքում-Մոփքում կամ ավելի հարավ և իրենց գրաված դիրքերը պահպանելու համար պայքար մղում այդ ժամանակվա իշխող պետությունների՝ Ասորեստանի, Բաբելոնի, հետագայում Ուրարտուի, ավելի ուշ՝ Պարսկաստանի դեմ:

Նրանց այդ կուտակումները իրենց համար վտանգավոր դիտելով, ուրարտուները ցրում էին պատմական Հայաստանի կամ այդ ժամանակվա Ուրարտուի զանազան վայրերը, իհարկե, առանձին տոհմերով կամ ընտանիքների առանձին խմբերով: Այսպես հարցնալովոր տարիների ընթացքում, անկախ իրենց կամքից, հայերը ֆիզիկապես մեկուսացված առանձին խմբերով ցրված էին Ուրարտուի ամբողջ տերիտորիայում: Այդ ցրվածությունը չէր կարող բարբառաբեկ ըմբռնել, ընդհակառակն, բարբառային տարբերությունները կշառագունեին: Նթե այդ ընթացքում տարբեր բարբառների ընտանիքներ մի որևէ տեղում հանդիպեին մեային, նրանք, իհարկե, իրար կհասկանային և նրանց խոսվածքները իրար միանալով նոր բարբառներ կառաջացնեին, սակայն այդ նոր

բարբառների և նախորդ բարբառների միջև կապահպանվեր այն, ինչ որ հիմքն էր մեր լեզվի, և որ իբրև ընդհանրություն կմնար: Հայերեն լեզվով խոսողները, ցրված լինելով ամբողջ Հայաստանում և մեծ ու փոքր կղզիներով այլ-սցեղ կոլեկտիվների մեջ ապրելով*, ունեին մի առավելություն. նրանց լեզուն հասկանալի էր Հայաստանում եղած բոլոր այն բնակավայրերում, որտեղ հայերի հատվածներ կային: Դրա հետևանքով էլ հայերեն լեզուն առաջին հազարամյակում ամբողջ Հայաստանում վերածվել էր միջցեղային լեզվի և՛ հայերի համար, և՛ օտարների համար: Այդ միջցեղային լեզուն հայերենի այն տարբերակն էր, որը բարբառների համեմատությամբ ավելի կոնսերվատիվ էր, պահպանում էր հնդեվրոպական նախալեզվի ընդհանուր հիմքերը, դա այն լեզուն էր, որը երկարատև գործածվելով իբրև միջցեղային ընդհանուր լեզու, ձևավորվեց որպես գրաբարասիստեմ լեզու:

Երբ հայերի գլխավոր ուժերը IX—VIII—VII դարերում անցան Եփրատը, նրանք ամենուրեք գտան իրենց լեզվով խոսողների, այդ պատճառով էլ Հայաստանի տերիտորիայի խաղաղ նվաճումը տեղի ունեցավ բավական արագ: Այստեղ ևս մենք նկատի չունենք, որ մի մասսայական ժողովուրդ մասսայորեն և ղենքով տիրեց երկրին, այլ այն, որ նորեկ հայկական առանձին ցեղեր բնակություն հաստատեցին Ուրարտուի (հետագայում պարսկական սատրապությունների) զանազան մասերում, կամ անցյալներում եկած հայերի կոլեկտիվների կամ տեղական բնիկ ցեղերի կողքին, կամ նույնիսկ Հայաստան ներգաղթած սկյութական և այլ ցեղերի կողքին: Հայ ժողովուրդը դեռ չկար, կային ամբողջ Հայաստանում սփռված հայկական տոհմեր ու ցեղեր, որոնց հաբեանները, բնիկ թե եկվոր, այլալեզու ցեղեր էին: Բնական կերպով այդ բոլորի համար հայերենը կլինեք միջցեղային ընդհանուր լեզու, որովհետև հենց իրենք հայ ցեղերն էլ տարբեր բարբառներով խոսելով՝ ունեին իրենց համար ընդհանուր միջցեղային լեզու: Այդ միջցեղային լեզուն վաղուց, ինչպես ասացինք, գոյություն ուներ Փոքր Հայքում: Դա հայերեն լեզվի այն տարբերակն էր, որ ամենահավատարիմն էր հնդեվրոպական ժառանգությանը, մեծ չափով պահպանելով հնդեվրոպական հայերենի ընդհանուր հիմքերը: Այդ լեզուն համեմատաբար նման էր հայերենի այն տարբերակներին, որոնք փոխված էին Հայաստանի կենտրոնական մասում: Այդ տարբերակը մոտ էր նաև Փոքր Հայքում մնացած հայերի խոսվածքներին:

Այսպիսով, մինչև VI դարը Հայաստանի տերիտորիայի վրա հայերը մեկ միություն չէին կազմում, ցրված էին, ուրեմն նրանց մեջ լեզվական համաձուլում և բարբառների վերացման պրոցես տեղի չէր կարող ունենալ, ընդհակառակն, կշարունակվեք բարբառների տարբերակման պրոցեսը: Բարբառային տարբերությունները գնալով ծավալվում էին, քանի որ հայերի տերիտորիալ տարածումը զգալի չափով խախտել էր լեզվական միությունը: Առանձին հայկական դադութներ, բնակավայրեր ստացել էին լեզվական զգալի անկախություն և հետևաբար լեզվական փոփոխություններ կատարելու անկաշկանդ հնարավորություններ: Մյուս կողմից, նրանք ունեին օտար, այլալեզու հարեվաններ, որոնք սովորում էին հայերենը, քանի որ հայերենը ձեռնտու էր, որովհետև այդ լեզվով խոսում էին Հայաստանի շատ տեղերում, մինչդեռ ամեն մի օտար ցեղի լեզվի գործածությունը սահմանափակվում էր միայն այդ ցեղի բնակավայրով: Դրա հետևանքով հայերեն լեզվով խոսելու գիտակցություն ու պահանջը, ինչպես և նախապայմաններն, ավելի շատ էին և ուժեղ փորձավորվել

խոսողներ ունեցող տեղական լեզուների համեմատությամբ, ուստի և ամեն տեղ, որտեղ օտար ցեղի կողքին կար հայերեն խոսող կոլեկտիվ, օտար ցեղն էր սովորում հայերեն, որ կարողանար խոսել թե հարևան հայերի հետ, և թե հարեւան այլալեզու ցեղերի հետ: Այսպիսի բարենպաստ հանդամանքները թելադրում էին հայկական բոլոր ցեղերին պահպանելու իրենց լեզվական միությունը և զորացնելու իրենց միջցեղային լեզուն, որ ընդհանուր հայերենն էր: Այդ միջոցին հայերեն լեզուն, որ զգալի մասով, հատկապես հնչյունական կառուցվածքով նման էր Կենտրոնական Հայաստանի հայկական տեղական բարբառներին, քնդականական կառուցվածքով ավելի կոնսերվատիվ էր, հնչյունապական նախալեզվի հիմքերը պահպանելու խմաստով, թեև իր ներսում նա ներքին օրինաչափություններով զարգանում էր: Այդ միջցեղային լեզուն հետագայում դարձավ ընդհանուր հայկական լեզու, նրբ տեղական ցեղերը ձուլվեցին հայերի հետ և ամբողջ տերիտորիայում առաջացավ մի ընդհանուր հայ ժողովուրդ (народность): Այդ միջցեղային լեզուն դարձավ հայ պետականության լեզու, երբ կազմվեց հայ պետականություն ամբողջ տերիտորիայի վրա: Այդ միջցեղային լեզուն ավելի առաջ ընդհանուր լեզու էր այն իշխանությունների տերիտորիայում, որոնք կազմվեցին նախքան հայ պետությունը կազմվելը, պարսկական սատրապությունների քայքայումից հետո: Վերջապես այդ միջցեղային լեզուն էլ ավելի առաջ, սլարոններին հավասար, ընդհանուր լեզու էր պարսկական այն սատրապություններում, որտեղ բնակչության մեծ մասը հայեր էին:

Տեղական ցեղերը, խոսելով հայերեն, աստիճանաբար ֆիզիկապես էլ ձուլվում էին հայերի հետ, հալանում էին, կորցնելով իրենց լեզուն: Այդ տեղի էր ունենում հետևյալ կերպ. դրսի հարաբերությունների համար նրանք օգտագործում էին հայերեն լեզուն, որպես միջցեղային լեզու, իսկ ընտանեկան ներքին կյանքում խոսում էին հին լեզվով, որի գործածությունը գնալով ավելի ու ավելի սահմանափակվում էր, մինչև որ հայերեն լեզուն այնքան սովորական և մայրենի էր դառնում, որ ցեղական լեզվի պահպանումը դառնում էր անմիտ: Պարտվում էր այդ ցեղական լեզուն, հաղթում էր ընդհանուր բնույթ կրող հայերեն լեզուն: Համաբայա այդ վիճակն էր ապրում նախառույտյուն շրջանում ուտիերենը, որը ավելի խոշոր կոլեկտիվի լեզու էր, քան մեր ենթադրյալ օտարացեղ ամեն մի լեզու: Այդպես է նաև այժմյան հայ բոշաների լեզուն:

Սակայն, հայերենը սովորելով և հայերի հետ միաձուլվելով օտարները որոշ փոփոխություններ էին մտցնում որդեգրած հայերենի մեջ, փոփոխություններ, որոնք հաճախ կարող էին յուրացվել նաև բնիկ հայերի կողմից: Այդ փոփոխությունները շոշափում էին արտասանությունը, զգալի շափով բառային կազմը, ավելի նվազ չափով քերականությունը, որի մեջ թեև իրենց քերականական ձևաբանությունները չէին մտցնում, բայց հայերեն լեզվի քերականական ձևաբանությունների ընկալման մեջ մտցնում էին որոշ փոփոխություններ: Այսպես, օրինակ, հայերենի ներկան, որ ընդհանուր լեզվի մեջ ուներ նաև բղձականի իմաստ, ժառանգված հնդեվրոպական նախամայր լեզվից, առնվում էր միայն որպես ըղձական. perfect-ի և անցյալ կատարյալի նույն տարբերությունները վերացնում էին և այդ ձևերից մեկը մահացնում, գերակշռություն տալով երբեմն գոյություն ունեցող վերլուծական կառուցվածքին (պերֆեկտին՝ գոհալ ձմ), երբեմն համադրական կառուցվածքին (աորիստին՝ գրեցի): Նման

փոփոխություններն էլ ուժեղացնում էին բարբառային տարբերակումները, երբ, մանավանդ, դրանք յուրացվում էին նաև հայ հատվածների կողմից: Այդ ձևով ստեղծվում էին հաստատուուն բարբառներ: Այսպես է ընթացել մեր բարբառների առաջացման պրոցեսը: Երբ երկրորդ դարի վերջերին, մեր թվականությունից առաջ, Հարեհրե և ապա Արտաշեսը քաղաքական բաբեհաջող հանգամանքների հետևանքով միացնում էին պատմական Հայաստանին այնպիսի տերիտորիաներ, ինչպիսիք են Վասպուրականը, Տարոնը, Փայտակարանը, Գուգարքը, Խոր-ձևանքը, Կարինը, Եկեղյաց դավառը և այլն, այդ բոլոր տեղերում նրանք գրտնում էին բարբառախոս հայեր, որոնք հասկանում էին ընդհանուր հայերեն լեզուն, այդ բոլոր տեղերում այլևս չկային օտարալեզու շատ ցեղեր, թեև հատուկենտ ցեղեր զեւ կարող էին պահպանված լինել, դա եղավ հիմքն այն հրաշքի, որ կատարեցին Արտաշեսն ու Զարեհ՝ կարճ ժամանակում նվաճելով այսօրն մեծ տերիտորիաներ: Այդ պատճառով էլ Սարարոնն ասում է, որ այդ ցեղերը հայ պետության մեջ միանալուց հետո, բոլորը միալեզու էին (Արտ. Տաշ, ԵՄԱԵԱ ՏԵՂԵ: Միալեզվությունը արտահայտվում էր նրանով, որ բոլորը հասկանում էին միջցեղային լեզուն, իսկ իրենք խոսում էին հայերենի այս կամ այն տարբերակով կամ բարբառով: Ահա այդ պետականությունը հաստատվելուց հետո միջցեղային լեզուն դարձավ պետական լեզու, որը մշակվեց բանավոր կերպով և V դարում վերածվեց գրական լեզվի: Մենք էլ այդ դրական լեզուն հետագայում կոչել ենք գրաբար:

Այդ լեզվով խոսում էին մայրաքաղաքի բնակիչները, իբրև ընտանի լեզվով, և պետությունն ընդհանուր պետական լեզվով:

Գրաբարն իբրև ընդհանուր պետական լեզու, բարբառներն իբրև տեղական լեզուներ ապրում էին կողք-կողքի հայ պետականության ամբողջ շրջանում, երբ գրաբարը այդ շրջանում համեմատաբար ավելի ուժեղ ազդեցություն տներ բարբառների վրա, քան բարբառները գրաբարի վրա, որովհետև նա ընդհանուր պետական լեզու էր, ուստի և ավելի հեղինակավոր. այդ պատճառով նրա նորմաները խանդավառ կերպով պահպանվում էին։ Տարօրինակ է թվում, թե ինչու գրավոր լեզու դառնալուց հետո գրաբարն ավելի արագորեն ենթարկվեց փոփոխման, քան երբ նա բանավոր էր, իսկ հետո էլ մահացավ։ Այդ պետք է բացատրել նրանով, որ քայքայվեց գրաբարով խոսող հասարակությունը, Հայաստանի մայրաքաղաքները քանդվեցին, բնակչությունը ցրվեց, առանձին հոր ոստաններ կազմվեցին, որոնք և՛ փոքր լինելով, և՛ ընդհանուր կապերից զուրկ լինելով՝ իրենց լեզվով ենթարկվում էին բարբառների խիստ ազդեցության։

Սկսվում էր հայկական ֆեոդալիզմի զարգացումը, ուրեմն և բարրառների զարդացման նոր նախապայմաններ էին ստեղծվում, քանի որ այդ շրջանում վերացավ նաև հալ պետականությունը: Գրավորի մեջ պահպանվելով համեմատաբար անփոփոխ, բանաժոր լեզվի մեջ դրաբարը ենթակա էր բարրառների խիստ ազդեցության: Ամենալավ գրող հեղինակները V դարի վերջերին անդամ թեև գրում են դեբար, բայց խորքում մտածում են բարրառայնորեն: Դրա լավագույն օրինակը Ղազար Փարպեցին է, որի լեզվական կառուցվածքի մեջ զարմանալիորեն նշմարվում է ժամանակակից Փարպիի բարբառը:

Դրանից հետո հայ բարբառները չէին կրում այլևս գրաբարի կենդանի ազդեցությունը, այլ միայն զբաղվոր ազդեցությունը, որը շատ ավել թույլ էր. և

դրա հետեանքով, ինչպես և հայկական ֆեոդալիզմի զարգացման ընթացքով, հայ բարբառների տարբերակումն ու ծավալումը նոր թափ ստացան: Վերջնականապես հաղթանակեց բարբառների մեջ երկձևույթ քերականությունը, պարզացավ շարահյուսությունը, ուժեղացան արտասանական մի շարք առանձնահատկություններ: Սակայն դժվար է պնդել, թե հին բոլոր բարբառները շարունակվեցին. նրանցից մի քանիսը լաթանվեցին նոր բարբառների. մյուսները ազդաբնակչության մասնակի տեղափոխությունների և խառնվելու հետևանքով միաձուլվեցին և մի նոր բարբառ կազմեցին. հատկապես լայն ծավալ ստացան հայ բարբառների ճյուղային կազմությունները, իսկ որոշ բարբառներ էլ անհետացան: Սակայն, բարբառային առանձնահատկությունները շարունակեցին պահպանվել, մեծ և ուժեղ բարբառները ոչ միայն տեղի չովեցին, այլ էքսպանսիա կատարելով իրենց խմբին միացրին այլ բարբառներ, դրա հետևանքով առաջացան մեր բարբառների յոթ ճյուղերը:

Չի կարելի պնդել նաև, որ ժամանակակից բարբառները հին բարբառների հետ իրենց կազմությամբ բոլորովին նույնն են. բայց որ մեր յոթ բարբառային ճյուղերը ներկայացնում են հնագույն շրջանի հայ բարբառները նոր վիճակով, այդ բանում կասկածելու առիթ չկա:

Նկատելի է, որ մեր բարբառաճյուղերը ներկայացնում են ցեղախմբերի հին դասավորության աշխարհագրական վիճակը: Այսպես, օրինակ՝ Այրարատը «Ում» ճյուղի հայրենիքն է, իսկ այդ շրջանը եղել է Երվանդյանների իշխանության շրջան, Կենտրոնական և Արևմտյան Հայաստանը «Կը» ճյուղի բարբառների վայրն է, և հին հայերի մեծ ցեղախմբերի բնակավայրերն էլ հենց այդտեղ են եղել: Հյուսիսային Սիջադետքը «Հա» ճյուղի աշխարհագրական վայրն է, այստեղ էլ եղել են հին հայ ցեղերի բնակավայրերը. «Կա» ճյուղը դասավորված է հիմնականում Կիլիկիայում և Անտիոքում: Այստեղ ևս հայ հին համայնքների բնակավայրերն են: «Ս» ճյուղը դասավորված է Գողթնից արևելք, որը հայ հին ցեղերի և սկյութական-սակական ցեղերի միաձուլման բնակավայրն է եղել: «Ա» ճյուղն էլ դասավորված է Ատրպատականում, որտեղ ևս հայերի հին գաղութները միաձուլվել են աեղական բնակչության հետ: Անգամ առանձին խոշոր բարբառներ դասավորված են ըստ այնպիսի աշխարհագրական վայրերի, որոնք կրում են հին ցեղական անուններ, օրինակ՝ Վանի բարբառը, Իրազնի բարբառը, Մուշի բարբառը, Կարնո-բարբառը և այլն, և այլն:

Հայ բարբառների գոյացման մեջ արտադաղթերը կատարել են որոշ դեր. բայց այդ դերը շատ մեծ չի եղել: Եթե բարբառների բազմաթիվության համակարգով դատենք, ապա հեշտությամբ կպարզենք, որ Ռոդոստոյի բարբառը տեղափոխված է 4-րդ Հայքից, Մուշավայի բարբառը՝ Եփրատի վերին հոսանքի մերձակայքներից, Ն. Ջուղայի բարբառը՝ Այրարատի մերձակայքից և այլն:

Այսպես է ընթացել հայ բարբառների պատմությունը: Նրանց զարգացման պրոցեսը եղել է անընդհատ տարբերակման պրոցես, համեմատաբար ավելի քիչ չափով՝ ինտեգրացման պրոցես, բայց չի եղել ժամանակ, որ հայերեն լեզուն բարբառներ չունենա, որովհետև, ինչպես պնդում է էդ. Աղայանը, «չկա լեզու, որ բարբառ չունենա»: Այդ ֆորմուլան ճիշտ է ամեն մի յեղվի պատմության բոլոր ժամանակների համար: Ավելի ևս մեր բարբառների մասին այդ կարող ենք ասել, քանի որ մեր ժողովրդի պատմությունը ինտեգրացման շատ քիչ հնարավորություններ է տվել, բայց դիֆերենցման՝ շատ մեծ հնարավորու-

լեզուները Դրա հետևանքով հայերեն լեզուն իր բարբառների սխառմով և պատմությամբ կարող է համարվել դասական լեզուներից մեկը:

Պատմական բարբառագիտությունը նոր գիտություն է և շատ նոր հարցեր ունի լուծելու: Ոչ պրոֆ. էգ. Աղայանի մի հոգովածով, ոչ էլ իսկ մեր աշխատություններով չեն լուծվի բոլոր հարցերը: Այս ուղղությամբ անհրաժեշտ է հայ լեզվաբանների կոլեկտիվ աշխատանքը¹:

К ВОПРОСУ ПРОИСХОЖДЕНИЯ АРМЯНСКИХ ДИАЛЕКТОВ

А. С. ГАРИБЯН

(Р е з ю м е)

Статья посвящена происхождению армянских диалектов и является ответом на статью проф. Э. Б. Агаяна, напечатанную в «Историко-филологическом журнале», № 2. Известно, что Р. Ачарян считает, что армянские диалекты возникли в XI—XII вв. нашей эры после разгрома Армении турко-монголами. Автор данной статьи придерживался того мнения, что большинство основных армянских диалектов возникло очень давно, в более древний период, чем сам древнеармянский язык. Э. Агаян примиряет эти две точки зрения, предлагая свою теорию. Он соглашается с автором данной статьи в том, что в древности армянский язык делился на диалекты, но утверждает, что, начиная с XIV—XIII вв. до нашей эры, эти диалекты стали сливаться в единый язык и во II в. до нашей эры вылились в тип древнеармянского языка. Такой процесс проф. Э. Агаян объясняет тем, что централизованная государственная власть в период Арташесидов (II в. до н. эры и I в. н. эры) создала для слияния диалектов соответствующие условия. А начиная с II в. нашей эры, стали складываться новые армянские диалекты, которые качественно оформились в XI—XII вв. нашей эры. Утверждение автора данной статьи, что сохранившиеся в современных 12 армянских диалектах звонкие придыхательные взрывных согласных являются наследием индоевропейского праязыка, проф. Э. Агаян отрицает и выдвигает теорию атавистического восстановления этих согласных через тысячу лет после их исчезновения. По мнению автора заблуждения Э. Агаяна происходят оттого, что он не учитывает значения артикуляционной базы, приспособляющей произношение заимствованных слов к системе данного языка или диалекта. Так, например, если каринский диалект армянского языка в начале всех армянских слов произносит только звонкий придыхательный dh (դ'ուռ > dhur' = дверь), то заимствованное русское слово «директор» будет произноситься dhirektor. Следовательно, каринский и все другие

¹ Պրոֆ. էգ. Աղայանը հայտարարում է, թե բարբառների դասակարգման հարցում մեր հանգել ենք իր տեսակետին: Մենք իրեն պիտի հիստորիկական, որովհետև հայտնարերել ենք զրարարակերս մի բարբառ ևս, որով իր դասակարգման եզրակացությունները հնանում են: իսկ մերը հաստատվում:

диалекты свидетельствуют о том, что армянский язык через свои диалекты сохранил индоевропейское наследие звонких придыхательных. Надо иметь в виду, что этот ряд взрывных присущ только индоевропейскому праязыку, индийским языкам. Армянские диалекты не могли бы это перенять у кого-либо из аборигенов или соседей, так как в Малой Азии и на Кавказе не было языка, обладающего этим рядом взрывных согласных. Естественно допустить, что армянские диалекты унаследовали его только от индоевропейского праязыка. Кроме этого, сравнительный консонантизм армянских диалектов подсказывает это заключение. Автор приводит следующую таблицу:

И.-е. язык-основа	bh	b	p	ph	dh	d	t	th	gh	g	k	kh
Древн. арм. язык:	—	b	p	ph	—	d	t	th	—	g	k	kh
Арм. диал. I группы:	bh	b	—	ph	dh	d	—	th	gh	g	—	kh
„ „ II „	bh	b	p	ph	dh	d	t	th	gh	g	k	kh
„ „ III „	—	b	p	ph	—	d	t	th	—	g	k	kh
„ „ IV и V „	—	b	—	ph	—	d	—	th	—	g	—	kh
„ „ VI „	—	b	p	ph	—	d	t	th	—	g	k	kh
„ „ VII „	—	—	p	ph	—	—	t	th	—	—	k	kh

Как следует из этой таблицы, индоевропейский консонантизм в армянском языке подвергается передвижению от звонких придыхательных в сторону глухих придыхательных. Это передвижение в армянских диалектах дает семь вариаций. Все эти вариации подвергаются одному неотступному закону, а именно, закону первого передвижения, который и является железным внутренним законом развития армянского консонантизма, берущего начало от консонантизма индоевропейского праязыка. Проф. Э. Агаян не чувствует этого закона, так как он имеет дело с литературными языками, которые одни, без учета диалектных явлений, могут обнаружить видимость каких-то иных закономерностей. Автор статьи утверждает, что этот внутренний закон развития армянской фонетики и другой, не менее важный, закон переосмысления индоевропейской основы в развитии армянской морфологии давали генеральное направление развитию всего армянского языка, получившего начало от индоевропейского праязыка. Конечно, этим двум законам сопутствовал ряд других законов развития армянского языка, но они были главенствующими.